

ԾԻԼՆ Ա. Ի. Ա. Ր. Ա. Յ. Ր. Ի

Ա. ՏԱՐԻ 1866 ԹԻԻ Ե.

ՄԱՅԻՍ

ԲԱՆԱՔՆՆԱԿԱՆ

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՄԻ ՃՇՄԱՐՏԱՍԷՐ ՀԱՅՈՒ

ԹԻՖԼԻՉԷՆ ԳՐՈՒԱՆ ԵՒ ՄԱՍԻՍ 729 ԵՒ 730 ԹՈՒԵՐԻ ՄԷՋ
ՏՊՈՒԱՆ ՆԱՄԱԿԻՆ

Ընթերցողները կը յիշեն անշուշտ, որ անցած տարի, Մա-
սիս լրագրի 713 համարին մէջ մի գրուածք հրատարակեցինք,
հերքելով Լազարեան ճեմարանի ֆորէլեան հանդիսում կար-
գացուած ճառի բովանդակութիւնը, որոյ հեղինակ Արդոյ
Մսեր Մսերեանը ճառախօսութեան բուն առարկայէն հե-
ռանալով, տարածամու նկարագրել էր Ռուսաստանի Հայոց
վիճակը շատ վերացական վերացականութեամբ և նոյն խոյ
Լազարեան ճեմարանն անհիմն գովաբանութեամբ: Մեր գըր-
ուածքի գէժ մի համառօտ նորաձեւ պատասխան հրատա-
րակեց մեր բարեկամ և Մսերի եղբայր Պ. Ստեփան Մսեր-
եանը Մասիսի մէջ, և նոյնն աւելի ընդարձակ Արշալուսի
մէջ: Բայց մենք պատասխանելու արժանի չհամարեցինք,
որովհետեւ Պ. Ստեփան Մսերեանի հրատարակածները մեր
գրուածքի պատասխանը չէին, այլ լոկ զրախօս թշնամանք

մեր անձի դէմ, և սոսկ դովասանք իր եղբօրը վրայ . ուստի և մենք չուղեւոյլ նոյն չափով հատուցանել մեր բարեկամին՝ անդորրը հողւով տարանք այն զրախօսութիւնքը, բաւական համարելով, որ մեր գրուածքով ընդհանուրը պիտի հասկանայ ճշմարտութիւնը : Յետոյ կարդացինք մի կարկառած և իմաստազուրկ յօդուած էլ Երեւակի մէջ Պ. Մամիկոնեանի ստորագրութեամբ : Այդ յօդուածն էլ մեր գրածի պատասխանը չէր, ուստի և թողեցինք առանց ուշադրութեան, թող հաւանողները լիաբերան կեցցէներ ասեն՝ թէ Պ. Չամուրճեանին և թէ Պ. Մամիկոնեանին իրանց պաշտօնը և յանձնարարութիւնը լաւ կատարելու համար : Մենք՝ ազգի անունով անձնական չահերու ծառայող և կոյր գործիք եղած մարդկանց հետ դործ չենք կամենում ունենալ : Աստուած իւրանց հետ, թող վարեն այդ վարձովի պաշտօնը, քանի որ կենդանի շունչ ունին . ճշմարիտ հայու համար՝ նրանց ոչ պաշտպանութիւնը նշանակութիւն ունի և ոչ դաւաճանութիւնը, վասն զի արդէն յայտնի է իրանց պաշտօնը և նպատակը :

Կարդացինք նոյնպէս մի նամակ Մասիսի 729 և 730 համարներին մէջ, Տփլիսում գրուած և այս տեղ ուղղուած ճշմարտաւէր հայ ստորագրութեամբ նորէն իբրեւ պատասխանախօսութեամբ հրատարակած մեր յօդուածին : Եթէ մի քանի ամիս էլ առանց պատասխանելու համբերէինք, դուցէ ուրիշ գրուածքներ էլ հրատարակուէին, որոնց անչափ կը փափաքէինք, բայց որովհետեւ ճշմարտաւէրքը արդէն սկսել են աշունները վարագուրել, մենք ստիպուած ենք կրկին ճշմարտութեան վկայ հանդիսանալ Աստուծոյ և մարդկան առաջ, որպէս զի դիմակաւոր ճշմարտասէրները պարզամիտների սրբտերը չորսան, և ինչ որ ասելիք ունին յանուն ժողովրդեան՝ իրանց անունը յայտնելով ասեն, և ոչ թէ ստութիւնը ճշմարտութեան անունով ծախեն և օտարասիրութիւնը և օտարի պատուէրները հայ կոչումով : Սկսենք ուրեմն :

Ճշմարտաւէր հայը իր նամակի բովանդակութեան մէջ ներկայանում է մեզ մի քանի տեսակ երեւոյթներով, երբեմն վեղարով որպէս քարոզիչ Սուրբ Գրոց, երբեմն որպէս Ժողով (զապլոթի) քաղաքի ներքին կեղատուութեանը վերահաս և հարկերու որքանութեանը որպէս թէ տեղեակ, եր-

բեմն որպէս հայկաբան բառերու ստուգութեան հետախոյզ, երբեմն որպէս խղճահար լրատեա, որ ոչ իր պաշտօնը կամե՛ նում է ուրանալ և ոչ հայու խեղճութիւնը, երբեմն որպէս աղուէսաբարոյ տիրասէր, երբեմն որպէս կոյր հրամանակատար, երբեմն որպէս օրէնսդէտ, բայց առհասարակ որպէս ստախօս և զրաբան: Ուստի մենք մեր խօսքը կուղղենք ոչ թէ այս ստախօս ճշմարտասէրին և անսնուն հայուն, այլ բոլոր սրտով, մտքով և անձնով հայութիւն սիրող Հայերուն, որոնց աչքերը չէ չլացած օտարամարտութեան փառքով, որոնց սրտի մէջ չէ չխլած կարեկցութեան և ազգասիրութեան կայծը, որոնք չեն ծախում երբէք իրանց խիղճն անիրաւութեան մամնայով, որոնք Հայոց ազգի ամեն ցաւերուն տեղեակ են, դարման գտնելու մտածող են և որոնք դիտեն ճշմարտութիւնը և արդարութիւնը խոստովանիլ և ոչ թէ օտարականի, այլ իրանց օտարամոլ եղբարոյ ապրտակներուն և թուքերուն անդամ սիրով համբերել:

Մենք ցաւելով դրած էինք, որ Լաղարեան ճեմարանը հիմնադրի նպատակէն չեղուած, տէրութեան վարժարանաց կտրդն է անցած, և այնքան նշանակութիւն ունի Հայոց համար՝ որքան մի նահանգական վարժարան Ռուսաց, այսօր նորէն նոյնը կրկնում ենք ցաւօք սրտի, մենք այս տեղ Տաճկաստանի մէջ և բոլոր Հայք Ռուսաստանի մէջ, որոնց յայտնի է Լաղարեան ճեմարանի ներկայ ուղղութիւնը: Եթէ Լաղարեան ճեմարանը ազգային է և ոչ տէրութենական, թող ուրեմն չէնք վարձով արուի և իր եկամուտներով փոխադրուի մի այնպիսի տեղ, որ տեղ Հայ կայ և հայութիւն, և ոչ թէ Մսկուայի պէս մի տեղ մնայ, ուր խեղճ մանուկներն իրանց հայրենեաց և ծնողաց գրկէն դնալով, բաւական չէ որ մուսնում են իրանց ազգայնութիւնը, շատերն էլ անսովոր կլիմայէն ցաւադարուելով չեն արժանանում իրանց ծնողաց և հայրենեաց տեսութեան անդամ: Թող համազուն ամենքը, որ Լաղարեան ճեմարանը բնաւ ամենեւին ազգային չէ իր ներքին և արտաքին ուղղութեամբ, այլ ազգային է միայն իր եկամուտներով, վստի դի հիմնադիրը և նախընտրուքը Հայք են եղել: Լաղարեան ճեմարանի վիճակին արժանացած է այժմ և թէսդ տիպի խաղիպեան ուսումնարանը, որոյ վերայ

Գերապատիւ Այլազեանի շնորհիւ ազգային վիճակային դու-
մարէն ծախք է եղած երեք հարիւր հազար ռուբլի արծա-
թէն աւելի, և այսուհետեւ ալ ծախքն ազգը պիտի վճարէ,
բայց ուսումնարանի անունը խալիպեանին է, իսկ վարչու-
թիւնը և ուղղութեան հոգին Տէրութեանը: Մեր սիրտը ան-
մխիթար յաւած էր և ցաւում է այս իրողութեանց վրայ, ո-
րովհետեւ մեր ազգը այդ դումարներով ազգային համալսա-
րան կարող էր ունենալ: Բայց այժմ ուսումնարան էլ չունի:
Թող լսեն ուրեմն մարդախաբ աղուէնները և իմանան որ մեր
սրտի ցաւն է որ մեզ ստիպում է ճշմարտութիւնը խօսել և ոչ
թէ կիրք ու անձնական շահասիրութիւն, որուն հաւատա-
րիմ սպասաւորներ են իրանք: Թող իմանան, որ մենք ոչ
լազարեան տոհմը բամբասած ենք (ինչպէս գրում է ստա-
խօս ճշմարտասէր հայը) և ոչ խալիպեանին, այլ ճշմարտու-
թիւնը յարգած ենք պարզ և անմեղելի կերպով: Նոյն իսկ
Ռուսաց տէրութեանը եթէ հարցնես, բացարձակ կասէ, որ
լազարեան և խալիպեան վարժարանները Տէրութեան իրա-
ւասութեան և վարչութեան տակն են, բայց արի՛ տես աշ-
խարհիս բանը, որ մի քանի անանուն Հայք կամենում են
սկզբել թէ այդպէս չէ: Նորօրինակ կամակորութիւն:

Մենք գրած էինք, որ Լազարեան ճեմարանի մէջ երգած
են Ռուսերէն «Տէր կեցո՛ղ լիմազաւորն» և չեն երգած «Տէր
կեցո՛ղ զՀայս» ոչ թէ կամեցած ենք թագաւորի համար ազօ-
թեւն արգելել, (ինչպէս մեկնաբանել է անանուն ճշմարտա-
սէրը) այլ կամեցել ենք ցոյց տալ, որ ինչպէս միւս ազգային
ուսումնարաններում այսպիսի հանգիսի ժամանակ երգերը
լինում են թէ թագաւորի և թէ ազգի համար, Լազարեան
գլխորդի մէջ այնպէս չէ: Թող չկարմրի ուրեմն անանուն ճըշ-
մարտասէրը և զուր տեղ Պօղոս առաքեալի գեղեցիկ խօս-
քերն իր ստախօսութեանը վաճան չբռնէ: Մենք թէ թա-
գաւորի համար աղօթեւն արգելող լինինք Լազարեան ու-
սումնարանի երգը չէինք առաջ բերել, այլ նոյն իսկ Ռու-
սաստանի Հայոց եկեղեցիներում ժամերգութեան ժամա-
նակ, օրը երեք չորս անգամ եղած կայսերական դահի յիշա-
տակութիւնը և առանձին տօներով սահմանուած հինգ տո-
ւած բարեմաղթութիւնքը, որոնք Ռուսիոյ Հայ կղերը և

եկեղեցում գտնուած ժողովուրդը ծունկ չոքած կատարում են : Մենք եթէ բարեմաղթութեան արգելման համար խօսեցու լինէինք այս կէտերն առաջ կը բերէինք և կատէինք , ինչ որ ասած է երբեմն Մոսկուայի Թիարէս մետրապօլիտը Նիկողայոս կայսեր , որ հարցնում էր մետրապօլիտէն թէ՝ հնարք չկայ արդեօք ժամերգութիւնը կարճելու , և նա պատասխանած . « կայ շատ դիւրին հնարք , այսինքն ժամերգութեան մէջէն և տօնախմբութեան ցուցակէն հանել կայսերական տոհմի յիշատակութիւնը , որ կէս ժամերգութեան տեղէ բռնում » : Մենք կըրցանկանք որ Հայոց ազգն ազօթէ իր հովանաւոր տէրութեանց համար , բայց կըրցանկանք նոյնաբէս որ ձուկ խնդրած ժամանակ օձ չստանայ և ո՛չ հաց խնդրած ժամանակ քար :

Մենք դրած էինք մեր առաջին յօդուածի մէջ , որ Գեր . Մսեր Մսերեանի ճառած և դրուատած խաղաղութիւնը , ճոխութիւնը , պերճութիւնը , բարեբաւոտութիւնը են . ևն . վերացականութիւն է Ռուսաստանի մէջ , վասն զի Հայոց ժողովրդեան չորսէն երեք մասը վերջին աղքատութեան մէջ են թէ հարկաց ծանրութեան կողմանէ , թէ գաւառապետաց և նահանգապետաց հարստահարութեան կողմանէ , թէ աւաղապետաց և անպատակութեան ու դատաւորաց անիրաւութեան : Մենք այս տեղ էլ Տէրութիւնը բամբատած չենք , ասած ենք այն , ինչ որ աչքով տեսած ենք , ինչ որ ամենքը տեսնում և զգում են Ռուսաստանի մէջ , բայց թէ ինչո՞ւ չեն խօսում և դրում , ցաւելով ասում ենք , որ շատ ճշմարտութիւնք կան որ Ռուսաստանի մէջ ոչ խօսիլ կարելի է և ոչ դիւել և Սիբերիայի սառնամանիքէն տախտակած մարդկանց մեծ մասը ճշմարտութիւնը սրտումը գերեզման են իջնում : Նոյն խակ Ռուսիոյ տէրութիւնը բաւական չէ իր նահանգապետներէն , գաւառապետներէն , դատաւորներէն և անդադար մէկ տեղէն միւս տեղ է փոխադրում , որպէս զի զգաւորանան կաշառակերութենէ , ժողովուրդը կողոպտելէ , աւաղակաց ընկերութենէ հեռանան , բայց նրանք Տէրութեան վրէժը էլի ժողովրդէն են հանում , և այս է որ մենք աստատակութիւն ենք ասում , եթէ կամենում է իմանալ անանուն ճշմարտասէր . վասն զի այս աստատակութիւնը չար է ամեն տեսակ աստա-

տակութենէ : Ի զոր է օրինակ բերում ճշմարտութեան Նազիր շահին , ջէրքէղներին , լիզ զիններին : Մեր ատած ասպատակութիւնը ծանր է ամեն տեսակ ասպատակութենէ : Լեռնայ կանաչ ասպատակութեան ժամանակ ժողովուրդն էլ իր կողմէն ազատ էր իր զէնքը և զրահը վեր առնել , իրան պաշտպանել , լեռներում կամ բերդերում ամրանալ և կամ յաղթութիւլ : Բայց դատաւորաց հարստահարութիւնը , առաջակներ պաշտպանելով ասպատակութիւնը դառնաղոյն է և աղէտալի : Վասն զի այս դիպումով մէջ ժողովուրդը ինքն իրոն պաշտպանելու իրաւունք չունի և պաշտպանութիւն դանելու համար կրկին իրան հարստահարողին պէտք է դիմէ : Այսպէս ենք տեսել մենք , բայց թէ նոր վտիտութիւն է կամենում անել Տէրութիւնը , ինչպէս դրում է ճշմարտասէր հայը թէ՛ « Շուտով կը բացուին հրապարակական դատարաններ ամենայն քաղաքներումը , ուր բոլոր դատերը կը քննուին և կը դատուին հրապարակումը , ինչպէս Եւրոպայի մէջ » մենք մարդարէական հոգի չունինք որ չեղած բաները դուշակենք և ոչ այնքան աչքակապութիւն որ չեղածը դովենք : Ճշմարտասէրի այս մարդարէութիւնն արդէն մի մեծ ապացոյց է մեր ասածներին , որ մինչև ցայսօր եղած հարստահարութիւնը և անիրաւութիւնը դեռ յարատեւում են և այսուհետեւ պիտի արդարութեան դատարաններ հաստատուին որ դատերը քննուին այնպէս , ինչպէս Եւրոպայի մէջ :

Ճշմարտասէր Հայն ասում է « Շնորհիւ Ռուսաց տէրութեան կողմից անհատներումը թաղաւորում է խաղաղութիւն , այժմ համարձակ կանայք և մանկունք դիւղէ դիւղ և քաղաքէ քաղաք կերթեւեկեն առանց ինչ երկիւղի » : Զարմանալի ճշմարտասէր , գոնէ տղամարդիկ էլ չէ կամենում ասել , այլ կանայք և մանկունք : Բայց մենք չենք խմանում թէ կանայք և մանկունք ասելով ի՞նչ է ուղում հասկացնել : Սրդեօք այդ ի՞նչ կանայք և մանկունք են , որ քաղաքէ քաղաք երթեւեկում են : Կարելի է ճշմարտասէրը Մալականների և Դուխաբորներու կանանց և կամ Ռուսաց մաթուշկանների համար է ասում , որոնք խոտի սայլերը բարձած երթեւեկում են : Այն չէ՞ իմանում , որ ինչ բանէ մեր կանայքը վախում էին Նազիր շահի ժամանակ , այժմ այդ երթեւեկողների հոգն անգամ

չէ՝ Այն չէ իմանում որ ահագին խտրի, կաղամբի, գետնա-
ինձորի (բաթամթի) աղբերը չեն դողանում հիմա, այլ տներ
են կտրում, ճանապարհորդներ են թալանում։ Այնպիսի մի
տարի կը պատահի՞, որ աւաղակների խումբեր չլինին թիֆ-
լիզէն Երեւան, Ղարաբաղ, Շամախի, Ալեքսանդրապոլ և
այլ տեղումնք եղած ճանապարհների վրայ, և այնպիսի ա-
մառ կը լինի՞ որ մարդիկ չուզաննուն տղա ճանապարհներումը
և քանի՞ քանի անգամ Երեւան և նոյն իսկ Տփլիսի մէջ՝
Այդ լինչ նոր խաղաղութիւն է որ տիրել է Կովկասեան գա-
ւառների մէջ։ Միթէ էլ քվարթալների (զապթիէներու)
կանանց մատի վրայ գողացած մատանիներ չէ՞ն գտնվում։
Միթէ տարին 300 մանէթով պաշտօն վարող դաւառական
գատաւորներն էլ տարեկան հազարաւոր մանէթների և կահ
կարասիքի տէր չեն դառնում։ Միթէ փոքրաւորիկ պրիս-
թաները (թաղական ոստիկան) էլ մեծամեծ տներ չեն շի-
նում։ Թէ դեռ այս ամենը շարունակվում են, բայց Տէրու-
թիւնը միտք ունի վերջացնել, ինչպէս որ միտք ունի հրա-
պարակական գատարաններ հաստատել։

Մենք գրած էինք որ ժողովուրդն աղքատ է և հարկերը
ծանր։ Ճշմարտեք հայը պատասխանել է թէ՝ «գիւղական ժողո-
վուրդքը այնքան աղքատ չեն և հարկերը ծանր չեն»։ Ու-
րեմն ինքն էլ խոստովանում է, որ աղքատ են և հարկերը
ծանր են, բայց ոչ այնքան և ոչ այնպէս ասելով, կամենում է
փոքր ինչ թեթեւացնել թէ աղքատութիւնը և թէ հարկերի
ծանրութիւնը։ Յետոյ, որպէս թէ հարկերի քանակութիւնը
նշանակելով, որոշած է, ասում է, «մենք ամէն տարեկան 10 նէ
մինչեւ 15 մանէթ ևայլն»։ Երանք արքունի գիւղերում կը բը-
նակին։ Զարմանալի հաշիւ։ Խեղճ ճշմարտասէրը վախենալով
որ մի գուցէ հարկերի քանակութիւնը մենք աւելի ճիշդ ի-
մանանք, ասում է, 15 մանէթ ևայլն։ Հիմա ինչքան որ մենք
աւելադրենք 15 մանէթ պէտք է ասէ ևայլն այն աւելցածը
կը նշանակէ։ Այս մի և նոյն է թէ՝ մէկին 100 մանէթ պար-
տական լինիս և ասես, ես քեզ պարտական եմ 30 մանէթ
ևայլն։ Բայց ՚ի վուր է վախացել ճշմարտասէր հայը, մենք
հարկի քանակութեան մասին, միայն այսքան գիտենք,
որ գիւղացիք տարին մի քանի տեսակ և մի քանի ան-

գամ հարկ են վճարում: Այս հարկ վճարելն էլ փոխ չէ մեզ համար, միայն դիտենք որ վճարում են պարտք անելով և շատ անգամ արտը գեռ կանանչ արդիւնքը պարտաւորով վրայ ծախելով: Գիտենք որ շատ առողջ երիտասարդներ իրանց հօր հարկային պարտքը վճարելու համար երկար տալիսներով ծառայում են այս ինչ կամ այն ինչ պարտաւորով և շատ անգամ իրանց բոլոր կեանքը ծառայութեան մէջ են անցնում: Գիտենք որ հարկահանները մարդուն իր կնոջ մօտ, հօրն իր որդուն մօտ, փեսային հարսի մօտ ծեծում ու փետում են և արտասուենք թափել տալի, թէպէտ էն էլ գիտենք, որ Տէրութեան օրէնքով ծեծն արգիւրած է: Գիտենք որ գիւղականներն ոչ թէ միայն ծանր հարկեր են վճարում, այլ և շատ անգամ իրանց վարուցանքը թողած գաւառապետների և նահանգապետների հրամանով ստիպուած են Տէրութեան փոստայի ճանապարհները ուղղել, ջրանքների և կամուրջների շինութեան վրայ բանիլ, հեռաւոր անտառներէն իրանց եզներով գերաններ ու փայտ կրել և այս բոլորն էլ առանց վարձու: Թիֆլիզէն Էջմիածին գնալիս հարիւրաւոր խեղճ գիւղականներ մեր աշխարհի Սեւանայ լճակի մօտ ջրանցքի շինութեան վրայ բանում էին և երբոր կաթողիկոսի կառքը տեսան, ինկան առաջը փակեցին և արտասուելով խեղճներին, որ նահանգապետին խնդրէ գոնէ օրական հացի փող (ստակ) տալ իրանց: Մենք ինչ որ գրում ենք մեր աչքով տեսածն ենք գրում և հարցուցածն նոյն իսկ գիւղականներէն: Թո՛ղ չի դարմանայ անտուն ճշմարտասէրը, որ մենք վեց տարի մնալով Ռուսաստանում և զանազան տեղեր ման գալով շատ բան ունինք տեսած, և չսէ թէ միայն Թիֆլիզէն Էջմիածին ենք գնացել: Կարելի է ինքն հարիւր անգամ մանէ եկել այդ երկրումը կարելի է ինքն և այդ երկրէն լինի, բայց մենք իրան պէս առանց կարեկցութեան և մտքի կուրուքեամբ չենք ման եկել և մի անգամ չենք կողկասեան, Արարատեան երկիրներն գնացել, այլ երկու անգամ, ոչ միայն կաթողիկոսի հետ այլ և 1853 թուականին. ման եկած ունինք նոյնպէս և կողկասեան լեռնականների մէջ իրանց ազատ ժամանակ, որոնց կենցաղավարութիւնն առաւել նախանձելի գտանք, քան թէ

Ռուսաց տէրութեան հովանաւորութեան տակ եղած գիւղականացը : Բայց ինչպէս ճշմարտասէրն ինքն չէ կամենում համեմատութիւն անել , մենք էլ նոյնպէս համեմատութեան կարօտութիւն չունինք , և դուցէ չէինք գրել այս բաները , եթէ առաջին անգամ արդոյ Մսերը և այժմ էլ ինքն անանուն ճշմարտասէրը առիթ չը տային մեզ և երջանկութիւնը ծովացած քարոզէին Ռուսաստանի Հայոց մէջ “դերձացեալն փառօր , հոխացեալն ընդօր , բարեբաստեալն կենօր ” բացադանչելով օդի մէջ իւրեղ և թշուառ Հայոց համար : Բայց ճշմարտասէրը համեմատութիւն չը սիրելով դարձեալ մի համեմատութիւն է արել քանի մի տէրութեան հպատակների , որն որ մենք էլ առանց համեմատութեան չենք կամենում թողնել : Նա առում է “ Ռուսիոյ Հայաստանի հասարակ ժողովուրդը չէ այնքան աղքատ և ճնշուած , ինչպէս իւր սահմանակիցքը ” և յետոյ օրինակ է բերում , որ Օսմանեան և Պարսից աշխարհներէն թիֆլիզումը հաւաքվում են մինչեւ 15 հազար հոգի մշակութեան համար , և այս կէտէն հետեւացնում է , որ այն երկիրներին մէջ ժողովուրդը աղքատ է և Ռուսաստանի մէջ հարուստ : Այս մասին թող ներուի մեզ ասել , որ ճշմարտասէրը մշակների թուի խոշորացուցով է նայել և չը բաւականանարով գտնէ 1,500 հաշուել մշակների թիւը , 15,000 հազար է գրել , որ մի բացարձակ ստախօսութիւն է : Բայց այս թուական սխալմունքը թողնենք և հարցնենք ճշմարտասէրին թէ՛ Ռուսիոյ հպատակ գիւղականն անօթութենէ որ մեռնում լինի , կարո՞ղ է արդեօք ուրիշ Տէրութեան մշակութեան գնալ : Արդեօք Տէրութիւնն անցագիր կը տայ նրանց : Այն Տէրութիւնն որ անցագրերի մատակարարութեան դժուարութեամբ երբեւ չի նէական պարսպով պատած ունի անցաւորների ճանապարհը : Այն Տէրութիւնը , որոյ սահմանէն մարդ կարող է սահմանաւոր ժամանակով ուխտագնացութեան , վաճառականութեան և բժշկութեան համար միայն անցագիր ստանալ , այն Տէրութիւնը , որ լավում է թէ նամակադրութիւններն անգամ բաց է անում , այն Տէրութիւնը կը թողնէ՞ արդեօք որ իւր հպատակները գնան աղատօրէն ապրուստ փնտռելու , ինչպէս ուրիշ տէրութեանց երկիրներէն աղատօրէն գնում են Ռուսաստան : Այժմ մենք հարցում ենք ճշմարտասէր պարո-

նին, հը թողո՞ւ արդեօք Տէրութիւնը. թո՛ղ պատասխանէ մեղ: Մենք գիտենք որ մենչեւ ցայսօր չէ թողած, բայց կարելի է այսուհետեւ միտք ունի թողնելու ինչպէս և միտք ունի հրապարակական դատարաններ բանալու անիրաւները քննելու համար:

Մենք դրած էինք որ հարկ աւելացնելու պատճառով, թիֆլիզու ժողովուրդն ապստամբութեան է դիմել և առաջին ասողը մենք չէինք, նոյնն Եւրոպական լրագրերումը արդէն հրատարակուած էր մեր գրութենէն շատ առաջ: Մարդասպանութիւնքը, բանտարկութիւնքը, քննութիւնքը, սպառնալիքները, քաղաքի պաշարումն և առ հասարակ թիֆլիզու վտանգաւոր վիճակը ոչ ոքին անծանօթ չէր երբոր մենք մեր յօդուածը հրատարակեցինք: Բայց արի՛ տես աշխարհիս բանը, որ անանուն ճշմարտասէրը այս ահագին անցքը ծածկելու և աննշանութիւն ցոյց տալու համար բառաքննութեան սօշէն է բռնել և երկար ու բարակ ձգձգում է թէ ինչո՞ւ «պատմութիւն» ենք գործ դրել մեր գրուածքի մէջ և ոչ «նկարագրութիւն», բայց ինքը մեզմէ աւելի սաստիկ կարող էր լինել և անուանում ժողովրդին: Այս տեղ միտքներս ընկաւ Գեր. Մսեր Մագիստրոսը, որ բառերի քննութեան յետեւէն ընկնելով շատ անգամ իբրեւ զուտ հայերէն բառ մեկնաբանում էր նա և այն բառերը, որոնք օտար լեզուներէն հայերէնի մէջ էին մտած: Օրինակի համար, եկեղեցի (Յայն. էկէզիա ժողով) հը թարգմանէր եկեղեցի. կանդեղ (Լապ. կանդեղ) կայանդեղ. քահանայ (Արաբ. քահան) քառեղ. կատու (Լապ. կարուս պրո. քեդե.) կայնու. կամ կայնի պառն և այլն և այլն: Երբոր Մսերի պէս Գեր. Հայկաբանը բառաքննութեան ժամանակ, այսպիսի տղայական մեկնաբանութեանց մէջ է ընկած, զարմանալի չէ, որ նրա ճառախօսութեան պաշտպան անանուն հրապարակէր էլ էական խնդիրը թողած, «պատմութիւն» բառն է երկարօրէն քաջկուտել: Սակայն մենք համոզուած ենք որ ինչ բառ կուզեն գործ գնեն, թիֆլիզու անցած տարուան անցքը միշտ հը մնայ այն ինչ որ եղած է: Մենք ցուցակ չունինք, որ աւելացած հարկի ծանրութիւնը համեմատենք և ոչ անանուն ճշմարտասէրի գրածին էլ հը հաւատանք, քանի որ ինքն իր գրածի վրայ ապահով չլինելով վախացել է իր անունը դնել:

Միայն այսքան դիտենք, որ թիֆլիզու աղետալի անցքը պատահած է հարկի ծանրութեան պատճառով և Շիրմաղեան Գալուստ քաղաքագլխոյ առանց իր ընտրող ժողովրդի կամքի հարկեր աւելացնելուն դադարնի հաճութիւն և մասնակցութիւն ցոյց տալու համար։ Այսքան դիտենք որ ժողովուրդը ո՛չ թէ կառավարութենէն, այլ ուղղակի իր ընտրած քաղաքագլխէն է կամեցել հաշիւ պահանջել, դիմել է քաղաքագլխի տունը, բայց քաղաքագլխը փախչելով ամբողջել է թայիրեանի տանը, ուր եղել է նոյն օրը և Ջալալեան Սարգիս արքեպիսկոպոսը։ Ժողովուրդն երբոր աղաղակներով Շիրմաղեանն է խնդրել, Սրբազան հայր Սարգիս արքեպիսկոպոսը, քաղաքագլխին թայիրեանի տան սենեկի մէջ փակելով դուրս է եկել պատշգամբի (բալկոնի) վրայ և երկինք ու երկիր վկայ կանչելով և իր կարգով երդուելով հաւատացուցել է ժողովրդին որ Շիրմաղեանն այն տեղ չէ։ (Աւաղ սուտ երդմանն)։ Ժողովուրդը կրկին քաղաքագլխին տունը և նրա օգնական Բաշէուզեանի դիմելով սաստկացել է քաղաքի մէջ արհաւիրք։ Այս տեղ ճշմարտապէս հայր բողոքովն ուրացել է ճշմարտութիւնը, բաւական է համարել միայն ասել, որ ժողովուրդը Բաշէուզեանին սպանել է, բայց թէ որչափ սպաննուել են ժողովուրդէն, քանի՞սը վիրաւորել են, քանի՞ քանի մարդիկ բանտերում փակուել են և ամիսներով քննութեան տակ ընկել, ի՞նչ դադարնի դարաններ և լրտեսական միջոցներ ՚ի գործ են դրուել, ինչպէս քաղաքը պաշարել և պատրաստուել կրակի ու բոցի տալու, որոնց ոչ մինը չէ ուղեցել դրել։ Այսքան դառն եղելութեանց համար բաւական է համարել ասել թէ՛ «մի դիպուածով արձակուեցան մի քանի հրացաններ»։ Այն անիրաւ, հրացաններ առանց կառավարութեան հրամանին և զինուորաց կամքին յիստաշով արձակուել են։ Բայց մենք կը զարմանանք այս տեղ բառաղնին ճշմարտապէսի վրայ, վասն զի յիստաշով մի հրացան արձակուիլ լաւ էինք, բայց հարիւրաւոր և հազարաւոր հրացաններ միասին արձակուիլ չէինք լաւ։ Այս էլ մի նորատեսիլ յիստաշ է։ Ռուսի զինուորի գրպանում կամ վերարկուի տակ եթէ գողացած բան բռնուի, երեսին կը խաչակնքէ, երդում կանէ և կասէ. «ես չեմ մեղաւոր, այլ գրպանս կամ

վերարկուս » : Այս տեղ նոյնն է ասել անանուն ճշմարտաւէրը, այսինքն հրացաններն են եղել մեղաւոր և ոչ զինուորները կամ իրանց հրամայողները :

Կեր առաջին դրուածքը կարդացողներն անշուշտ կը յիշեն, որ Թիֆլիզու խռովութեան անցքը շատ հարեւանցի կերպով էինք պատմել և նաև ասած ունինք այն տեղ որ էթէ հարկի ծանրութիւնը չլինէր հասարակութիւնը բնաւ ամենեւին խռովայող հասարակութիւն չէ : Վրաց թագաւորութեան վերնալէն յետոյ շատ ծանրութիւնք կրած են, շատ արտօնութեանցմէ զրկուած են, շատ նորանոր բաներ տեսած են և տեսնում են, բայց երբէք իրանց հաւատարմութեան մէջ արատ մուծած չեն : Թիֆլիզու հասարակութիւնն այն հասարակութիւնն է, որ Ռուսաց ամեն նորեկ փոխարքաների այնպէս է դիմաւորում, որ ո՛չ Հռովմայեցին այնպէս դիմաւորել է երբէք իր Պոմպէոսներին և Կեսարներին և ո՛չ Հայը իր Տիգրաններին և Արտաշէսներին : Թիֆլիզու հասարակութիւնն այն հասարակութիւնն է որ թէ կայսեր և թէ կայսերական տոհմի որ և իցէ անձի այցելութեան ժամանակ Կովկասեան երկիրներին այնպիսի ընդունելութիւն է անում, որ նոյն իսկ բուն Ռուսաստանի և բնիկ Ռուսիացիները մէջ նոյնօրինակ ընդունելութիւնք չեն պատահում երբէք : Քանի՞ քանի անգամ քաղաքացիներն իրանց աղ ու հացով բխրաւոր համբարներն իրանց դրօշակներով ու նուադարաններով, իրանց ծաղիկներով և ոստերով, յաղթական կամարներով և շքեղ հանդերձանքներով ընդունել են, թէ թագաւորին և թէ իր փոխանորդներին, և քաղաքի արուարձաններէն շատ հեռու տեղէն հանդէսով մտոյուցել քաղաքի մէջ : Ի՞նչ ճրագալայներ շրջակայ լեռներէն սկսած մինչեւ քաղաքի ամեն փողոցները, ի՞նչ հրձգութիւնք, ի՞նչ հրեղէն նկարներ, ի՞նչ հացկերոյթներ և կենաց բաժակներ և օրհնութիւն, եւ այս ամենը ո՞ւմ ծախքով — Թիֆլիզու հասարակութեան, արհեստաւորաց և քաղաքացեաց քրտանց վատտակով : Թիֆլիզու հասարակութիւնն այն հասարակութիւնն է, որ քաղաքի ամեն վայելուչ նորոգութիւնքը, ջրանցքները, սալայատակները, փողոցների վայելուչ տեսարանները, իրան վատտակով է պատրաստում և խաղական

Թատրոնին անդամ առանձին ծախք է վճարում, և նորէն իրան ծախքով ահագին արձան է կանգնեցնում վորոնցովի համար իբրեւ քաղաքի բարերարի և վերանորոգչի համար և Թատրոնը քաղաքական և ղինութեան պաշտօնաւորներն են վայելում: Թիֆլիզու հասարակութիւնն այն հասարակութիւնն է, որ Ռուսիոյ հովանաւորութեան տակ է մտել իբրեւ պաշտօնային իր ամեն արտօնութեանց և թեթեւացուցչի ծանրութեանց, բայց երբոր կամենում է իր ընտրած քաղաքագլխին նոր հարկերու հաշին իմանալ քաղաքագլխի փախըստեամբ, Թայիրեանցի պաշտպանութեամբ և Սրբազան Սարգսի սուտ երդմամբ մատնւում է ռմբակոծութեան, բանտարկութեան և սպառնալիք է ստանում համքարութիւնը ջնջելու համար և քաղաքական կառավարութեան արտօնութիւնը վերջացնելու համար: Ինչո՞ւ է լռում ճշմարտեքը այս գլխաւոր կէտերը, ինչո՞ւ չէ խօսում անխօս հասարակութեան իրաւանց համար: Ինչո՞ւ արդարութիւնը չէ վկայում: Միթէ կարծում է թէ իր սուտ և կարկատած փաստերով պատիւ պիտի բերէ Ռուսաց Տէրութեանը: Ո՛չ երբէք: Ռուսիոյ կառավարութիւնն ինքն զգացած կը լինի, որ իր վարմունքը Թիֆլիզի անցքին մէջ համապատասխան չէր հասարակութեան զգացմունքներին: Դողմուրդը Շիրմազանեանն է փնտռել և ո՛չ կառավարութիւնը և զօրակումբը: Կառավարութիւնը Շիրմազանեանի կուսակցութիւնը պաշտպանելով տեղի է տուել բոլոր հասարակութեան արտունջին և խեղճ ու անմեղ մարդկանց սպանման, բանտարկութեան և զանազան սպառնալիցայ: Մեր սիրտը յաւուսէ որ Թիֆլիզու չափազանց երախտադէտ և հաւատարիմ հասարակութիւնն այսպիսի փոխարէն է ստացել և այն էլ Շիրմազեանի պատճառով և Թայիրեանցի ու Սարգիս եպիսկոպոսի շնորհիւ: Կը գայ Ժամանակ, որ այս անցքերը մանրամասն և տեղնիտեղն կը դրուին, ամեն սկզբնական պատճառները մէջ տեղ կը բերուին, ուրեմն ճշմարտեքի միւս փաստերը տեսնենք:

Մեր առաջին գրութեան մէջ յիշած էինք որ Ռուսաստանի մէջ օրինագրքում կրօնի ազատութիւն և ներողամտութիւն կայ, բայց գործով ո՛չ: Եւ այս մասին Մսեր Մագիստրոսի մինչեւ յերկինս բարձրացուցած կրօնական ազատութիւնը,

մի փոքր դէպի երկիր իջեցնելու համար յառաջ էինք բերել մի քանի յայտնի անցքեր, որոնք յայտնի ապացոյց էին որ Ռուսիայում կրօնի ազատութեան իրականութիւնը բռնաբարուած է: Այս անցքերի կարգումն էին լազարեանց կողմէն եղած միջամտութիւնը, կառավարութեան խառնուկը եկեղեցական դործոց մէջ, վարդաշէն ու Շահրիար Կիւղերի բնակչաց կրօնափոխութեան դէպքերը և այլն: Ճշմարտութիւնն է, մեր դրածին պատասխանելու ժամանակ լազարեանց մասին ամենեւին չէ խօսում, որովհետեւ գրաւոր ապացոյցներ կան, կառավարութեան միջամտութեան կողմանէ շատ հարեւանցի է անցնում, որովհետեւ մէջ տեղը Պալաթէնիա կայ իրան քննութեամբ, այլ միայն խօսում է վարդաշէնցւոյ և Շահրիարցւոյ վրայ: Մենք ցաւում ենք որ կրօնական ազատութեան նշանակութիւնը և կրօնափոխութեան շարժառիթները չէ ուզում հասկանալ և կամ հասկանում է, բայց հրապարակով մեռցնում է իր խղճի ձայնը: Այս մասին պատասխանել անգամ աւելորդ է ճշմարտասէրին, որովհետեւ արդէն երկու տետրակ ունինք հրատարակուած Տեղեւորի և Խմբի Կոմիտէի միջոցով: միթէ չէ՞ կարդացել, կարող է կարդալ, նայնպէս և մեր Ծիւն, դուրս համոզուի և խմանայ թէ ի՞նչ է ճշմարտաիրութիւնը: Բայց կարելի է այն տետրակները ձեռքը չը հասնին, ուստի հարկ ենք համարում մի քանի խօսք էլ այս տեղ ասել ոչ նրա համար, այլ ընթերցողներին:

Ռուսաց օրինաբարքի մէջ (ինչպէս կարգացած են մեր առաջ) կայ մի տեսակ կրօնական ներողամտութեան օրէնք, բայց մի և նոյն տէրութեան հաստատութեամբ և հրամանով կայ կովկասեան երկիրների մէջ Ռուսական ուղղափառութիւն տարածելու ընկերութիւն: Այս ընկերութիւնը կողմնաւած է որպէս թէ Մահմէտականներին ուղղափառացնելու պատճառով, բայց օրէնքին նպատակը ընդհանուր հպատակների համար է: Մենք լսած ենք որ այս ընկերութեանը անգամ է և Սարգիս Զալալեան արքեպիսկոպոսը: Այս ընկերութիւնը քարոզական ընկերութիւն չէ, որ համոզելով հաւանեցնեն, այլ ամեն տեսակ հնարքներ կարող է դործ դնել միայն թէ հաւատաւորս լինին և մկրտուին: Այս ընկերութեան պաշտօնակատարներն որքան կրօնաւորս չահին,

այնքան պատուանշաններ ի կարժանանան և արտօնութեան կը հասնին : Կովկասեան լեռնականաց մէջ յայտնի , իսկ միւս քաղաքներ ի մէջ յայտնի ու գաղանի : Այս ընկերութեան անդամները գործ են դնում իրանց ամեն տեսակ հնարքը , միջոցներ են պառտում որ մի տեսակ ջուրը պղտորեն ու ձուկը որսան : Այս ընկերութեան ամեն տեսակ պաշտպանութիւն և ձեռնտուութիւն մատուցանում է կառավարութիւնը , ուստի և ընկերութիւնն այնպիսի անլուր միջոցներ է գործ դնում մանաւանդ հպատակ լեռնականաց մէջ , որ խեղճերը փոխանակ քրիստոնեայ դառնալու , կարծես թէ բոլորովին ուրացութեան են դիմում : Այս մասին առաջագրում ենք ճշմարտութիւն , որ լեռնականներէն հասած ազէտալի և սարսափելի գանգաւանները կարգայ թիֆլիզու գեպարտամեանի գործքերի մէջ և կամ հարցնէ լեռնականաց կողմերումը դրանում ցաւակից պաշտօնաւորներին , որոնք աչքով տեսած են բռնի մկրտութիւն և ջրացանութեամբ հաւատախիտութիւն : Այս ուղղափառութիւն տարածող ընկերութիւնն է բուն պատճառ վարդաշէնցւոյ և Շահրխարցւոյ կրօնափոխութեանը և ո՛չ թէ ճշմարտասէր յիշած էջմիածնի անանուն նուիրակը և կամ Օհան Սուլթանի հետ ունեցած նախանձը , որ մի ծիծաղելի բան է , որպէս թէ գիւղացիք կամեցել են ձեռքէն խել նրա կալուածքը : Միթէ կառավարութիւնը Օհան Սուլթանէն պէտք էր լալէր այն և նրանց տար , թող պարսկանային , ինչո՞ւ էին ռուսանում : Բայց վարպետ ճշմարտասէրն այնպէս արդարացուցել է խնդիրը , որ բնաւ մարդկառավարութեան վրայ կասկած չ'ունենայ , այն ինչ մենք գիտենք ու կրօնափոխութեան ականատեսներէն լսած ենք , որ կառավարութիւնը մեծ գումար է խոտացել և յետոյ իւրաքանչիւր ծերունի մկրտեալին 25 մանէթ միայն տուել է : Բայց ցաւալին այն է , որ այն մարդիկն այժմ կամենում են կրկին իրենց դաւանութեանը դիմել , բայց ողորմած կառավարութիւնը չէ թող տալի , ինչպէս ասում է ճշմարտասէրը : Այս վերջին եղբակացութեամբ ճշմարտասէրը բոլորովին ազապուցանում է կրօնական ներողամտութիւնը և ազատութիւնը Ռուսաստանի մէջ ի՞նչ տեսակ լինելը . . . շատ ապրի , շատ . . . :

Իսկ վարդաշէնցւոյ կամ Հայ Ռուսացւոյ կրօնափոխու-

Թեան մասին մենք այժմ երկարօրէն չենք կամենում խօսիլ և այս կրօնափոխութեան անցքն երկու անգամ պատահած է և ոչ մէկ, որ իրար հետ է խառնել ճշմարտասէր հայը: Մէկն է Սիլիկեան տոհմի հալածանաց ժամանակը և միւսը վերջին ժամանակներումն մինչդեռ մենք Թիֆլիզ էինք: Այս երկու անգամի կրօնափոխութեան անցքերն էլ շատ երկարապատում են: Մենք առանձին պիտի հրատարակենք, որ ճշմարտասէրը ճշմարտախօսութիւն սովորի: Բայց ճշմարտասէրը մեզ չէ հաւատում, ճշմարտը կարող է իմանալ վարդաշէնի նոյն ժամանակուայ տեղական յաջորդ Արամեան Գէորգ վարդապետէն: Երբեք է ուրիշ մարդկանցմէ էլ իմանալ, որովհետեւ բնաւ ամենեւին ծածուկ խնդիրներ չեն այս կրօնական խնդիրները, այլ բոլոր Հայոց յայտնի: Միայն ցաւում ենք որ ճշմարտասէրն ուրիշ կերպարանքով պատմելով ուրիշ գաղափար է կամենում տարածել Տաճկաստանի Հայոց մէջ: Թէպէտ ՚ի զուր աշխատանք և ունայն վաստակ, որովհետեւ ամեն բանագէտ մարդ գիտէ Ռուսական քաղաքականութեան հոգին, որ մինչեւ ցայսօր եղած է ամեն ազգերը, լեզուները և կրօնները ֆէ-դէ-ձէ առնել այսինքն ձուլել իր Ռուսականութեան մէջ և միակերպութիւն հաստատել զանազան լեզուների, կրօնքների և զանազան սովորութեանց եւ դաւանութեանց, որ անհնարին բան է. բայց սղորմելի ճշմարտասէրը բոլորովին զուրկ է այն մտքի աչքէն, որ տեսնէ այս բան և հասկանայ:

Ճշմարտասէր հայի սիրտը չէ համբերել, որ ընդհանուր առարկայովը վերջայնէ իր յօդուածը, այլ Ռուսաց ահագին Տէրութիւնը պաշտպանելու խնդրէն իջանելով, խօսքը մասնաւորել է մեր վրայ և մի քանի խոշոր խոշոր թշնամանք և զրարանութիւնք է արել: Այս տեղ նրա վերջին նպատակըն է եղել մեր պատիւն արատաւորելով և մեր վարած պաշտօններն ուրանալով աւելի ոյժ և զօրութիւն տայ իր սուտ փաստաբանութեանցը: Բայց շնորհակալ ենք Մատիս լրագրի խմբագրէն, որ մեզ համար շատ քիչ ասելիք է թողել մեր անձնական զրկանաց մասին: Թող իմանայ ճշմարտասէր հայը, որ մեր թէ առաջին և թէ այս գրուածքի շարժառիթն ամենեւին անձնականութիւն չէ, այլ վկայութիւն ճշմարտու-

Թեան մեր Հայոց ազգի համար : Թող իմանայ ճշմարտաբանը որ ազգի օգուտը շատ ու շատ բարձր է մեր անձէն , մեր օգուտէն և մեր կեանքէն անգամ : Թող իմանայ ճշմարտաբանը , որ մենք դեռ չգրած մեր յօդուածներն արդէն համադրւած ենք , որ բացի անձնական զրկանքէն ուրիշ բան չենք կարող ստանալ և այն ոչ թէ որ և իցէ Տէրութենէ , այլ մեր սուտ եղբարցմէ և անանուն ճշմարտասէրներէ և սպունասիրտ ազգայնոցմէ : Բայց մեր խիղճը չենք կարող ծախել և ճշմարտութիւնն ուրանալ : Թող իմանայ ճշմարտաբան հայը , որ իր մէն ամենեւին վշտացած չենք իր զրպարտութեանց համար , այլ շնորհակալ ենք , որ առիթ տուաւ մեր պակաս ասածները լրացնել թէ այժմ և թէ յետոյ : Թող իմանայ ճշմարտաբան հայը , որ ինքը թէ և վաթսուն տարի Ռուսաստանում եղած , բայց չէ կարող այնքան տեղեկութիւն ունենալ ինչքան մենք վեց տարուան միջոցում : Ինքը չէ մտածել այս խնդիրների վրայ , բայց մենք ամեն ժամանակ մտածել ենք և եթէ ճշմարտ խոստովանինք մեր գլխաւոր նպատակն է եղել լիովին ծանօթութիւն ստանալ մեր Ռուսիացեան Հայոց վիճակի վրայ և հանդամանքներն ամեն կերպով մեզ յաջողել են , թէ եւթօղիկոսի մօտ դանուած ժամանակ և թէ իմբազրութեան , մէկ կողմէն էլ քաղաքական յարաբերութեանց ծանօթանալով և միւս կողմէն ազգային կեանքի և վիճակի նկարագրութեանը ու անցքերի և դէպքերի պատմութեանց : Թող իմանայ ճշմարտաբանը , որ մենք այնքան հիմնաւոր փաստեր և հմտութիւն ունինք մեր դրածներին , որ ոչ թէ մէկ այլ հարկւրաւոր ճշմարտաբաններն անգամ երկիւղ չունինք : Ոչ ապաքէն այս էլ մի մեծ ապացոյց է մեր համոզմանը , որ մենք մեր յօդուածների տակ համարձակ կատարագրենք մեր անունը , բայց ճշմարտաբան հայը մի ահագին կայսրութեան պաշտպան է հանդիսանում և այնքան վստահութիւն չունի իր ասածներու վրայ , որ անունն ստորագրէ : Արդեօք խիղճը չէ ներում իրան , թէ իր պաշտօնը չենք իմանում : Միայն այսքանը կասենք , թող իմանայ վերջապէս ճշմարտաբան հայը , որ մենք ոչ մի տէրութեան թշնամի չենք և չենք էլ կարող լինել , վասն զի ինչ համեմատութիւն կայ Ռուսաց մեծազօր Տէրութեան և մի տկար Աղաբէդեան Մարկոսի մէջ : Մենք ուրախ չենք նոյն

պէս, որ այս աղէտալի դէպքերը ստիպուած ենք գրելու :
 Երանի՛ թէ Ռուսաստանի հայքը հարստութեան ու բարեբա-
 տութեան մէջ լինին, երանի՛ թէ Հայաստանեայց եկեղեցին ու
 Ս. զգն ամեն տեսակ կրօնական և մտաւորական ազատութիւն
 վայելեն Ռուսաց հովանաւորութեան տակ, երանի՛ թէ գէթ
 այժմեան կաթողիկոսական խնդրոյ յուզման ժամանակ ապա-
 հովեցնէ Ռուսիոյ կայսրը Հայաստանեայց եկեղեցւոյ կաթո-
 ղիկոսութեան դարեւոր անկախութիւնը և իրաւունքները :
 Երանի՛ թէ այս ամենը լինին, թող սուտ լինինք մենք մեր
 դրուածքներով :



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍՏԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

Բոլոր մարմնայն հոգի է կենդանութիւն. իսկ մարմնայն և հոգւոյ միտք են կառավար, և որպէս առ մի մարդ՝ այսպէս առ բոլոր աշխարհս:

Եղև զարարանս վարդապետաց Երկ. Յեղեմի. Եր. 49. Ըստ Անշեւոյնց օրինակ:

Այս խօսքն Եւրոպական լուսաւորութեան իմաստասէր վարդապետներէն չէ՝ որ վեր ենք առնում մեր ազգայնոց աչքի առաջը հանելու, այլ Հայաստանեայց լուսաւորութեան ամենէն գեղեցկախօս, ամենէն իմաստասէր և ամենէն աւելի բանաստեղծ վարդապետէն: Եղիշէն՝ մեր նախնեաց Տօրիւն առ Տասաճն ու Քրօպատօքն, իր հանճարոյն համար ուրիշ անունդ չէ ունեցած, բայց միայն քրիստոնէական ազատական նութեան հոգին, մարդկային հոգւոյն և հանճարոյն գերագոյն զօրութեան զգացողութիւնը մարդկային մարմնաւոր կոպիտ զօրութեան վրայ և ամենէն աւելի Հայրենեաց սէրը: Իր՝ մեր քրիստոնէայ աշխարհի դիւցազանց պատմութեան մէջ, այս զգացմունքները, այսինքն սէր ազատութեան, սէր հայրենեաց և սէր արդարութեան ամեն տեղ կը փայլին, ամեն տեղ լոյս կ'արձակեն նոյն զգացողութեանց, հայրենական սիրով վառուած ընթերցողի սրտին: Եղիշէն, ասում ենք, ծնուած ու սնուած հոգեկան լուսաւորութեան մէջ, ապրած ու ծերացած աշխարհիս ամենէն ընտիր երկրի ընտրութեան մէջ, ճանաչում է մաքի զօրութիւնը, մտաւոր լուսաւորութիւնը և հոգւով ու մարմնով նրա գերագոյն զօրութեան է յանձնում ինչպէս իրան նոյնպէս բոլոր աշխարհին, այսինքն նրանց, որոնց լուսաւորութեան համար աշխատում է, այն է Հայոց աշխարհն իր ժողովրդով: Այդ ճշմարտութիւնն իր բոլոր գրուածքի մէջ իրան առաջնորդած է, իր բոլոր զգացմունքների մէջ զբաղած է: Նա ճանաչել է հոգւոյ և հանճարոյ ազատութիւնը, աշխարհիս ամեն բանէ խիստ վերին, խիստ թանգ, խիստ սուրբ և ամենէն սիրելին, ամենէն պաշտելին և ամենէն զգալին մարդուս համար: Այս զգաց-

մունքով էին նաև հինգերորդ դարու Հայք, ոչ միայն տղայ-
մարդիկ և ծերունիք, այլ արք և կանայք, աղջկունք և ման-
կունք. որոնք իրանց եկեղեցիքն պաշտպանելով, ոչ միայն
իրանց հայրենի աշխարհն, հայրենի լեզուն, հայրենի կեանքն
էին պաշտպանում, այլ հոգւոյ և հանճարոյ ազատութիւնը
հոգեւոր և մարմնաւոր լուսաւորութիւնն ընդդէմ մարմնա-
ւոր և նիւթական զօրութեան: Զուր տեղ Հայոց քննաբանող-
ները կասեն, թէ Հայք ազատականութեան զգացմունք չեն
ունեցել, հայրենական սէր չեն զգացել: Մենք կասենք
դրանց՝ որ չկայ մի ազգ մեզ ծանօթ պատմութեան մէջ որ
իր աշխարհն ու հայրենիքն այնքան սիրած լինի՝ ինչպէս Հա-
յոց ազգը: Յունաց սէրն, հայրենեաց աշխարհի չէր, այլ
քաղաքային, մի քաղաքացւոյ սէրն էր Յունաց զգացած
սէրը, նոյնպէս և Հռովմայեցւոյ որն որ յետոյ եղաւ տիրապե-
տութեան մղեկան հոգի: Եւրոպական աշխարհի հայրենեաց
սիրոյ պատմութիւնը հազիւ մէկ կամ երկու դար ունենայ.
Ի՞նչպէս կարող էին Եւրոպական ազգերը հայրենեաց սէր ու-
նենալ սրտերումը, երբ անդադար մէկ դարումը մի քանի
անգամ հայրենիք էին փոխում, մէկ թագաւորէն, միւս թա-
գաւորին իշխանութեան ներքեւ էին ընկնում, իրանց երկրի
սահմաններն անդադար փոխւում: Պատմութենէն բխւաւոր
ապացոյց յառաջ բերել այս տեղ աւելորդ ենք համարում:
Եւրոպիումը հայրենեաց սէրն այն ժամանակ զարթեցաւ, երբ
մարդիկ իրանց թափառական կեանքէն դադարելով՝ վերջա-
պէս մի տեղ հաստատուեցան և ճշմարտապէս իրանց հայրեն-
եաց դաւանն եղան ու ժառանգեցին այն իրանց պապերէն
իրերւ իրանց բնական ստացուածք: Առաջին հայրենասէրք
Եւրոպիում Սուիցերիացիքն են եղած, ՚ի հարկէ, պէտք էր որ
լինէին, վասն զի միշտ կպուած ու յարուած իրանց երկրին և
իրանց բարքն ու վարքն միշտ անարատ պահած, սրանց սըր-
տերումն առաջին և մեծ զգացմունքն սէրն էր իրանց երկրի հա-
մար և իրանց հայրենական աւանդութեանց, սովորութեանց և
այլն: Սուիցերիացւոց հայրենասիրութեան նման էր նաև մեր
նախնի Հայոց հայրենասիրութիւնը, և այդ սէրն իրանց շնչովն
երկիրն էր և իրանց հայրենական կեանքը, բարքն ու վարքը:
Բայց երբոր հեղուհեա՜ց այդ երկրին տիրեցին, մէկ կողմէն

բարձր Ասիացիք իրանց ղէնքովն ու բարքովը, միւս կողմէն
 Հռովմայեցիք նոյնպէս իրանց ղինու զօրութեամբն և լուսա-
 ւորութեամբ, Հայք իրանց հայրենի երկրին վրայ ունեցած
 սէրն դարձուցին իրանց օրէնքին, բարքին ու վարքին վրայ,
 այնպէս, որ ամբողջութեամբ այդ սէրն Հայաստանեայց եկե-
 ղեցւոյն վրայ, այսինքն՝ հոգւոյ ազատութեան, որոյ անկա-
 խտութեան ու ազատութեան համար, ինչ արիւն, ինչ մար-
 դիկ, ինչ հանճար, մինչեւ հայրենի աշխարհն անդամ զոհ-
 ուիլն ամենուն յայտնի է։ Բիւզանդիոն որչափ դար որ կեանք
 ունեցաւ, այնքան դար անդադար աշխատեցաւ կայսերա-
 կան միակերպութիւն հաստատել իր տերապետութեան տակն
 եղող ազգերը, լեզուները, և մանրմունք անկախ իշխանու-
 թիւնքը մի կայսերական, մի կրօնական և մի ազգային իշխա-
 նութեան մէջ ամբողջելու, ոմանք բանսարկութեամբ, ոմանք
 ղէնքի զօրութեամբ, ոմանք յափշտակութեամբ, ոմանք էլ
 խաղառ ջնջելով և երբեք չյաջողեցաւ։ Այն աշխարհներն ու
 ազգերն, որոնք իր կայսրութեան պարիսպ էին, ինչպէս Եգիպ-
 տոս, Ասորիք, Հայք Ասիայում։ Հելլէնք, Բուլղարք և Իբերիա-
 յիք և այլք Եւրոպիում ջնջելով և կործանելով նրանց քաղա-
 քային կամ ազգային կամ կրօնական իշխանութիւնքը պատ-
 րաստեց և իր կործանումն որ շատ չանց կացաւ վրոյ հասաւ։
 Հայք տասն դար ամբողջ կռուեցան մէկ կողմէն ասիական
 ազգերի և նրանց վայրենի սովորութեանց դէմ, միւս կողմէն
 Բիւզանդիոնի պիղծ ղէնքերի ու նենգութեանց դէմ։ Այս
 երկու թրի մէջ մնացած յայտնի է որ շատ բան պիտի կորցու-
 նէին, բայց էլի, Հայաստանեայց եկեղեցին պահպանեցին
 այսինքն իրանց բարոյական և ազգային լուսաւորութեան ա-
 մենամեծ տարերքը։ Եկեղեցին պահպանելով, պահպանուեցաւ
 Հայոց նախնի սրբազան լեզուն, օրէնքը, պատմութիւնը, ա-
 ւանդութիւնը, կարգն ու կանոնը, հոգեւոր իշխանութիւնը
 և իր հոգւոյն և մտքի ազատութեան իրաւունքը։ Քրիստոնե-
 այ աշխարհիս մէջ առաջին անգամ խղճի ազատութեան
 համար դաշն դնող Հայք են լինում։ Վահան Մամիկոնեան
 բոլոր իր կեանքումը Սասանեան Պէրոզ թագաւորին
 հետ պատերազմում է հոգւոյ ազատութեան համար, և
 ղէնքը ձեռնէն վար չզնոււմ, մինչեւ որ նրա յաջորդ վաղար-

չին հետ մի դաշնադրութեամբ այդ ազատութիւնը ձեռք չբերում: Այդ հոգւոյ և հանճարոյ ազատութեան իրաւունքը վահանէն յետոյ եկող բոլոր Հայոց աշխարհական և եկեղեցական իշխաններին համար մի սուրբ, բարձր աւանդութիւն է լինում, մի և նոյն դաշնադրութիւն անում են Հայք Բիւզանդիոնի կայսերաց հետ, Արաբացւոյ առաջին խալիֆաների, Սէլճուքեանց Սուլթանների, Հռովմայ պապերի և այլ ինքնակալների և աշխարհակալների հետ. և երբ Ռուբինեաց վերջին թագաւոր պարոնները, իրանց ոտքի տակոյն են առնում տոհմութեամբ այդ ազատութեան իրաւունքը և ծախում մեր եկեղեցւոյ անկախութիւնը Հռովմայ պապերին մարմնաւոր իշխանութիւն գնելու համար, Հայոց ազգն, նրանց իր մէջէն դուրս է հանում և ինչպէս նրանց օտար արիւն, օտար ազգ էր ճանաչում, նոյնպէս և նրանց թագաւորական իշխանութիւնն էլ օտար է համարում և երեսի վրայ թողնելով նրանց առանձին, վերջապէս փչանում, կորչում են: Իսկ մեր օրերն ինչ են անում մեր կաթողիկոսներն ու պատրիարքները երբ Հայոց ազգի մի ամենափոքր մասը, զուրկ հայրենական սուրբ աւանդութեան գիտութենէ, վեր է կենում անշուշտ իր մարմնաւոր անդորրութեան համար, ծախում է իր խղճի ազատութիւնը պապական հովանաւորութեան տակ մոռնելու համար: Հայք, նրանց մերժում են ազգային իրաւունքէն, զոհում են նրանց եկեղեցւոյն անկախութեան համար և չեն ճանաչում նրանց իբրեւ հարազատ և օրինաւոր զաւակ Հայոց աշխարհի և Հայաստանեայց եկեղեցւոյ:

Բայց այս բաները մի քանի ամսուայ, մի քանի տարուայ միջոցում չեն կատարւում, այլ հարիւրաւոր տարիներ հարկաւոր են լինում մեր իրաւունքի ճշմարտութիւնը յայտնուելու համար: Պապականութիւնը, թէ կուզես, իմանալ ի՞նչ կերպարանքով է ներկայանում մեր ազգի առջեւ, բաց արա՛ պապական պատմիչ Չամչեան Միքայելի Հայոց պատմութիւնը նա միամտօրէն ամեն բան յառաջ կը բերէ ընթերցողին աչքին և կարծելով պարսաւել մեր պատրիարքներին և մեծամեծներին արած զգուշութիւնքն ընդդէմ պապականաց, նրանց կեանքը կը նկարագրէ իրանց հայրենի աւանդութիւնը պահպանելուն ունեցած ջանքի համար, օտար երկրի և օտար տէ-

րութեան տակ : Բայց մեր նախորդ պապերու քաջութեան արժանաւորութիւնը լոյս ընկնելու համար, դարեր հարկաւոր եղան և պապականութեան կեղծ ու պատիր եղբայրսիրութիւնը յայտնուիլ հարկ եղաւ :

Մի և նոյն հանգամանքի մէջ ենք այսօր և Ռուսաց կայսրներէ բանեցուցած քաղաքականութեան և նրանց մեր ազգի վրայ ունեցած պաշտպանութեան նկատմամբ : Դրանց գիտաւորութիւնքը մեզ պաշտպանելու, լաւ իմանալու համար, անհաճ յիսուն տարի հարկաւոր եղաւ որ անց կենան և մեծ ու մեծ փնտններ կրեն մեր Հայքն, որոգայթումը բռնուին իրանց հոգւոյ և մտքի ազատութիւնը շղթայներով կապուի, և շարժիլ չկարողանան ու ամենափոքր ճիկ անգամ կարող չլինին հանել, մինչեւ որ իմանան թէ ի՞նչ արծուի ճանկումն են բռնուած :

Մեր այս ասածների ապացոյց, մեր ընթերցողի առաջն կը հանենք մի քանի կոնդակ մեր հոգեւորականութեան պաշտպան կաթողիկոսներէն, տիեզերաց ամենէն մեծ ինքնակալաց գրուած, Հայոց բարոյական կենացը պահպանութիւն և Հայաստանեայց Եկեղեցւոյ հովանաւորութիւն խնդրելու մտքով : Այս կոնդակէն մինն է Հռովմայ Կլէմէնտ պապին, որուն մեծ քաղաքավարութեամբ Աղէքսանդր Ա. կաթողիկոսը խնդրում է, ձեռք վեր առնել Հայոց, պապական շինելուց և դարձուցանել իր քարոզիչների ընթացքն ուրիշ ազգերի վրայ և ուրիշ աշխարհների մէջ : Բայց թէ ինչ պատասխան է ստանում, դարձու քո աչքը իտալիոյ, Բոլոնիոյ, Ռումանիոյ և այլ Եւրոպական երկիրների վրայ ու կը տեսնես : Երկուսը մեծն Նաբոլէօնի, երկուսը Գերմանիոյ Ֆրանց կայսեր, երեք էլ Ռուսաց Աղէքսանդր Առաջնոյն, մին էլ Սնկկիական գեսպանին որ 'ի Պաղտատ :

Ի Գերապետէ եւ 'ի գերակազմական պատճառէ յԱստուծոյ Հօրէ 'ի գերակատար եւ 'ի գերաձնունդ Նորին բնութենէ իսկակից եւ անժամանակ միածին Բանէ 'ի գերազանց եւ 'ի գերալրական բոլորմանէ Նորուն էութենէ ինքնազօր եւ ամենազօր հոգւոյն ճշմարտէ ընտրեալ եւ պսակեալ, բարդաւաճեալ եւ փառաւորեալ եւ նոյն ամենասուրբ երրորդութեամբ պատասպարեալ ու նախախնա-

մեալ եւ Նորին Հնորձօք ուսճացեալ հողեւոր եւ մարմնաւոր իշխանութեամբ զարգացեալ եւ չքեղացեալ, Աստուածապետական փառաց հաղորդեալ արիւնով ծովու եւ ցամաքի քաղաքաց եւ աւանաց հեռաւորաց կղզեաց եւ մերձաւորաց գաւառաց, յոգնաթիւ եւ գերահռչակ պատուով մեծարեալ, Պետականին ժամանելոյ գահիդ Հոռլմայ Տեաւնդ Քլէմէնտոսի երկցս երջանիկ եւ արեղերական Հայրապետիկ :

Մեր նուաւս ծառայք Քրիստոսի, Տէր Աղէքսանդր ամենայն Հայոց կաթողիկոս, 'ի գահն Լուսազարդ եւ Աստուածաշջ Աթոռոյս Էջմիածնի, որք եւ ընդ ինեւ ժառանգաւորք սրբութեան ուխտի, եւ պիտկոպոսք, քահանայք, վարդապետք եւ ամենայն կղերք եկեղեցւոյ ողջոյն սիրոյ եւ սրբութեան մատուցանեմք վսեմախոն Սրբութեանդ եւ որոց ընդ հովանեաւ քոյոցդ թեւոց եկեղեցականաց եւ միանգամայն եւ աշխարհականաց խնդալ 'ի տէր ամէն :

Եւ ընդ Աստուածապարգեւ եւ Քրիստոսանուէր ողջունիս ծառայութեան եւ յայտարարութիւն առնեմք փառաւոր Տէրութեանդ քո, զի թէպէտ եւ մեր վերջացեալ գտանիւք ներ յայսմ ժամանակի 'ի մարմնաւոր իշխանութենէ, սակայն ղՋերն տեսանելով եւ լըսելով քաջատոնութեանն գերապատուութիւն զուարճացեալ բերկրիւք 'ի սիրտ եւ 'ի հոգի, եւ գոհութիւն անբաւ եւ բիւր օրհնութիւն մատուցանեմք ամենաթաղաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որովք թաղաւորք թաղաւորեն, հզօրք գրեն զարդարութիւն ըստ խմասանոյն բանի, եւ խնդրեմք զի զնոյն միշտ ամենայն ժամանակօք եւ պարագայիւք ամաց խաղաղութեամբ եւ անդրդռուելի կենօք հաստատուն պահեսցէ մինչեւ 'ի կատար եւ 'ի սպառումն յաւիտենիս այսորիկ 'ի փառս եւ 'ի գովեստ Աստուածութեան իւրոյ յուրախութիւն եւ 'ի պարծանս ամենայն քրիստոնէից ամէն :

Եւ արդ արտադրեմք եւ զայս առաջի գերիշխանական մեծութեան Ձերոյ, զի 'ի ընտւտ անդուստ 'ի սկզբանէ այն է սովորութիւն նախագահութեան գերագունիցդ վարդապետս եւ քարոզս առաքել 'ի չորեք ծագեան արեղերս, որպէս յովով անդամ տեսաք եւ տեսանեմք իսկ աչօք մերովք . իբր զի քարոզեսցեն զՔրիստոս Աստուած հաւատալ եւ խոստովանիլ եւ սովաւ գտանել զիրկութիւն հողաց եւ հասանիլ թողութեան մեղաց ըստ սրբազան Առաքելոյն Պօղոսի, որ ասէ . «սրաիւ հաւատալ յարդարութիւն եւ բերանով խոստովանիլ ըզիրկութիւն», քանզի ոչ ուստեքէ հաստատեալ է աւանդութիւնս այս, եթէ ոչ 'ի Նոյն ամենատեառնէ Քրիստոսէ Աստուծոյ, որ 'ի ժամանակս փրկադործ տնօրէնութեանն եւ

փառաւոր յարութեանն պատուիրեաց նշակերտաց իւրոց , ասելով . «Երթմըք յաշխարհ ամենայն եւ քարոզեցէք, որ հաւատաց եւ մըկրտեսցի, կեցցէ եւ որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի» :

Որ եւ այսու եղեալ պայմանաւ , կրկին նշանս կնքեալ տեսանեմք 'ի բարերար Փրկչէն մերմէ , հաւատ եւ մկրտութիւն : Ընդ որս եւ կան պարունակեալ ամենայն աւանդութիւնք Եկեղեցւոյ ուրովք յայտնի ծանուցանի բոլոր խորհրդածութիւնք քրիստոնէից : Քանզի զինչ է հաւատք , եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւնս եւ յանդիմանութիւնս որոց ոչն երեւին . ըստ առաքելոցն ընդ որոց կանոնի պարտիմք հաւատալ 'ի մկրտութիւն ամենազօր բնութեանն Աստուածութեան , եւ փառաւորել զերիս անձինս կատարեալս եւ յատկացեալս Հայր եւ Որդի ծնունդ Հայրական , որպէս բան 'ի մըտաց եւ սուրբ Հոգի բղիտումն 'ի Հօրէ անքննելի եւ անխմանալի , որոց ոչ մեծութիւնս եւ ոչ նուաստութիւնս , այլ զուգարիտ եւ համապատիւ , համակամ , համիչխան , համակար , համազործ եւ համազօր , վերացեալ բարձրացեալ ժամանակաց եւ յաւիտենից , անվախճան եւ անսահման թաղաւորութիւնս օրհնեալ յաւիտեանս ամեն :

Հաւատաւք եւ ընդ նմին զմին յերից անձնաւորութեանց զԲանս եւ զՈրդին ծնեալ 'ի Հօրէ նախ քան զյաւիտեանս անախտաբար եւ անժամանակապէս , ոչ յետոյ եւ ոչ կրտսեր , այլ 'ի յաւիտենական Հօրէ՝ յաւիտենական Որդի 'ի յանժամանակ Ծնողէ՝ անժամանակ Ծնունդ , հանդուռառիկ եւ հաւասար ամենայնիւ եւ քանզի ոչ էր Հայրն երբեմն , որ ոչն էր Որդի , այլ որպէս միշտ Հայրն էր Հայր , եւ Որդին՝ Որդի :

Նոյնն 'ի վախճան յաւիտենիցս ծնաւ մարմնով 'ի Սուրբ Կուսէն Մարիամայ Աստուածն կատարեալ եւ նոյն ինքն եւ մարդ կատարեալ հոգւով եւ մտք անորոշելի մարդկութեամբ եւ անթերի Աստուածութեամբ , եղեւ մարդ առեալ 'ի կնոջէ եւ եմուտ ընդ օրինօք ըստ առաքելոցն , յանձն էառ զամենայն կիրո մարդկացին՝ որ ինչ 'ի բնութեանս էր բաց 'ի մեղաց , ոչ ծառայելով իբրեւ զմեզ կրիցն բռնակալաց , այլ կիրք բնութեանս ծառայէ նմա իբրեւ Աստուծոյ : Յաղադս որոց եւ հաղորդիւր կամաւոր , այն եւ ակամային խոյս տուեալ փախչէին 'ի նմանէ զարհուրեալք իբրեւ յԱստուծոյ : Եւ յետ ամաց երեսնից դայ 'ի յորդանան , մկրտի 'ի Յովնանէ , եւ վկայի յԱստուծոյ Հօրէ՝ որդի սիրելի կուսածին մարմնովն եւ սուրբ հոգին աղանակերպ իջանէ յայտնեալ զփառս էակցին , որով եւ վարի յանապատ փորձիլ 'ի սատանայէ , եւ յաղթէ նմա մարմնովն Աղամային , եւ նոյն ժամայն ժողովէ աշակերտան , առնէ նշանս եւ զօրութիւնս բազումս , հրաշս եւ զարմանալիս յոլում ,

ուստի եւ 'ի վախճանի կամաւորութեամբ դայ 'ի չարչարանս , եւ յանձն առնու զմահ խաչի եւ մարդապէս մեռանի 'ի վերայ նորա եւ յառնէ փառօք յաւուրս երրորդի , երեւի աշակերտացն պէս պէս արուեստիւք յաւուրս քառասուն՝ հազորդելով ընդ նոսա հացիւ . եւ յետ այնորիկ յանդիման աշակերտացն ինքնիշխան զօրութեամբ համբառնայ յերկինս նովին մարմնոջն , որով ծնաւն . խաչեցաւ , մեռաւ եւ յարեաւ եւ նստաւ ընդ աջմէ Հօր , ըստ կանխասացութեանքն Դաւթի , որ գալոց է 'ի դատել զկենդանիս եւ զմեռեալս , որում հաւատացեալ սպասեմք եւ ակնունիմք յարութեան դատաստանի եւ հատուցման դործոց :

Ընդ նմին խոստովանիմք զՄայրն Յիսուսի Աստուածածին , որպէս եւ զԱստուած ծնեալ եւ զնոյն 'ի խաչ ելեալ ըստ Գրիգորի Աստուածաբանին , որ ասէ , որ գրեացն , « եթէ ոք զՄարիամ Աստուածածինն ոչ իմանայցէ , հեռի է Աստուածութենէ . եւ եթէ խաչելոյն ոք երկիրն ոչ պագանիցէ , նշովեալ եղիցի » :

Հաւատամք եւ 'ի Սուրբ Հոգին՝ Աստուած կատարեալ , առնելով բղիսեմն մշտնջենաւոր առ 'ի Հօրէ , որ խօսեցաւ յօրէնս եւ 'ի մարդապէս եւ յառաքեալսն եւ էջ 'ի Յորդանան գետ եւ 'ի սուրբ վերնատունն հողի պետութեան , հողի ազատութեան հողի բերանոյ Աստուծոյ 'ի Նորուն էութենէ Հօր եւ Որդւոյ , ոչ արարած ոչ ծառայ եւ ոչ հրամանաւոր , այլ հրամանատու . մի դործէ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ : Որպէս նոսաց Փրկիչն ոչխարաց թէ ես Հայր եւ Հոգին ճշմարտութեան , որ 'ի Հօրէ ելանէ եւ ոչ բաժանի , բղիսի եւ ոչ սպառի , եւ ինքն է Աստուած ինկեալ տիրապէս ամենայնի :

Հաւատամք եւ զհամաշխարհական Կաթողիկէ Եկեղեցի Սուրբ զթողութիւն մեղաց հաստատեալ 'ի վերայ հիման առաքելոց , մարգարէից եւ վարդապետաց ըստ Պօղոսի , զորս եղ Աստուած՝ յեկեղեցւոջ՝ այս են , նախ՝ զառաքեալս , երկրորդ՝ զմարգարէս , երրորդ՝ զվարդապետս եւ զի լուսաւոր բանիւք Աստուծոյ հաստատեալ մշնաց սուրբ եկեղեցի անդրդուելի եւ անսասանելի յաւիտեանս յաւիտենից : Եւ զի կառուցեալ է սա 'ի վիմէն կենդանութեան , որ է ինքն Քրիստոս Աստուած ըստ Սողոմոնի՝ թէ , « իմաստութիւն չինեաց իւր տուն եւ կանգնեաց սիւնս եօթն » , այսինքն՝ Սուրբ Եկեղեցի եւ խորհուրդք եօթն աւանդեալ 'ի նմա նախ՝ Մկրտութիւն . երկրորդ՝ Դրոշմ . երրորդ՝ Ապաշխարութիւն . չորրորդ՝ Հաղորդութիւն . հինգերորդ՝ կարգ Քահանայութեան . վեցերորդ՝ Պսակն . եօթներորդ՝ Օծումն վերջին . զոր առնեմք առանց յաւելուածոց եւ պակասութեանց :

Փանդի Գիրտութիւնն է սկզբնական եւ ներածութիւն առ Աստուծոյ ընտանութիւն եւ երկնային ժառանգութիւն թանց որոյ ոչ ոք մտանէ յարքայութիւն երկնից ըստ Տէրունեանն վճռոյն . եւ Դրոշմ որ է կնիք լուսաւոր մկրտութեան եւ Քրիստոսական հաւատոյն եւ տարանջատող յանհաւատից , որ առնէ զմեզ Քրիստոնեայս եւ Քրիստոսունողս խաչանիչ կնքով երեւիմք , որով եւ ահաւոր սատանայի եւ հրեշտակաց նորա : Ապաշխարութիւնն հանդերձ խոստովանութեամբ տայ մեզ յոյս թողութեան , զիրկութիւնն հոգւոյ եւ արձակումն 'ի կապանաց մեղաց' ըստ Տեառն Բանի թէ , «զոր արձակիցէք յերկրի եղիցի արձակեալ յերկինս» . եւ դարձեալ «եթէ ումեք թողուցուք զմեզս , թողեալ լիցի նոցա» եւ դարձեալ «ապաշխարեցէք , զի մերձեալ է արքայութիւն երկնից» : Նաեւ հաղորդութիւն մարմնոյ եւ արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , առնէ զմեզ հաղորդս Աստուածութեան իւրոյ ըստ ասելոյն . թէ «ամենայն որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ յիս ընակեցի եւ ես 'ի նմա» : Եւ դարձեալ «որպէս առաքեաց զիս կենդանի Հայր եւ ես կենդանի եմ վասն Հօր . եւ որ ուտեն զիս եւ սա կերցի վասն իմ» : Եւ մեք այսու յուսով ճաշակեմք զմարմին եւ զարիւն որդւոյն Աստուծոյ : Այլ եւ կարգ քահանայութեան ընկալաք 'ի Քրիստոսէ եւ 'ի յառաքելոց եւ ունիմք ամենայն ճշմարտութեամբ . զի ձեռն եղ 'ի վերայ դիտոց նոցա եւ օրհնեաց զնոսա որով եղեն կատարեալք եւ կատարելագործք ըստ սրբոյն Դիոնէսիոսի թէ «պարտիմք նախ մաքրիլ եւ մաքրել . լուսաւորիլ եւ լուսաւորել . կատարելագործիլ եւ կատարելագործել» . որպէս աւանդեցաւ առաքելոց սրբոց , զոր եւ ունիմք անշեղապէս , եւ անսայթաք ընթանամք ընդ շաւիղս նոցա : Նախ՝ առնուլ զՋեռնադրութիւն , եւ ապա տալ այլոց . յառաջ կատարելագործիլ եւ ապա կատարելագործել , որպէս եւ է իոկ ճշմարիտ եւ հաստատուն : Եւ Պոսկն է խորհուրդ մեծ եւ պանծալի ըստ Պօղոսի . «խորհուրդս այս մեծ է , բայց ես ասեմ 'ի Քրիստոս եւ յեկեղեցի» : Եւ թէ «պատուական է ամուսնութիւնն եւ սուրբ է անկողին եւ թէ Աստուած զուգեաց մարդ մի մեկնեցէ» . քանզի սա է պատուական զուգաւորութիւն , առանց որոյ չուն կոչին , որ ընդ այլում զուգին : Եւ Օծումն վերջին է . որ զօրացուցանէ զմեզ մտանել 'ի հանդէս ընդդէմ աշխարհակալին խաւարին առ 'ի ըմբշամարտել ընդդէմ դոռողին եւ առնուլ զպսակն յաղթանակի աւանդեալ մեզ 'ի սրբոց առաքելոց ըստ աւետարանական պետութեան թէ՝ «օծանէին զբաղում հիւանդս» , ուստի նոյն իւղ օրհնութեան կատարի յեկեղեցիս Հայաստանեայց ամենայն եւ օծանին ամենայն հիւանդացեալք հոգւով եւ մարմնով , որով եւ ունիմք յոյս առողջութեան հոգւոյ եւ

մարմնաց եւ վարատունսն յամենայն ախտից : Են եւ այլ յողունք աւանդեալք մասնաւորք կարգեալք յեկեղեցիս մեր , եթէ 'ի տօնս տէրունականս եւ սրբոց Աստուծոյ եւ եթէ 'ի պահս եւ յաղօթս 'ի տքնութիւնս գիշերային հսկման եւ թէ յարարողութիւնս ժամատեղեաց եւ կարգաւորութիւնս , զորս թողաք , զի մի լիցի ձանձրութիւն ընթերցողաց եւ մանաւանդ գրեալքս ոչ ըստ բոլորովին եւ ոչ ըստ պատշաճին գրեցաւ , այլ ըստ մասին սակաւակի բանիւք թողով ապաստանի ձեր գերակառար իմաստութեանն չափել մասամբ զբոլորն , որ եւ 'ի յոյս հաւատացեալ մկրտիմք հոգւոյն կենդանութեան եւ մերոյն վրկութեան ըստ անսուս խոգուման Տեառն թէ՛ «որ հաւատայ եւ մկրտի կեցցէ» , դարձեալ 'ի կարգ անդր 'ի վեր ելանելով ասեմք թէ որովհետեւ ունիմք մեք հաւատս եւ մկրտութիւն Խաչքն աջնորդի նախասացեալք ոչ պարտին աշխատ լինել առ մեզ , այլ առաւել առ այնոսիկ , որք ոչ կարգան զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , եւ ոչ խոտովանին զնա Աստուած եւ ոչ զանօրէնութիւն նորա աւենայն եւ ոչ ունին զՔրիստոսական կնիք յանձնաւ իւրեանց , եւ ոչ ձանաչեն զխորհուրդս եկեղեցւոյ եւ ոչ ընդունին զԱստուածաշունչ գիրս հին եւ նոր կտակարանս եւ ոչ զիսկն զանուն առաքելոց եւ մարգարէից եւ վարդապետաց եւ ծիծաղին 'ի վերայ անհաս խորհրդոյ քրիստոնէիցս , եւ զառանցանս վարկանին զպաշտելի դաւանութիւնս քրիստոնէից առ որ ամենապարբ Երրորդութիւնն եւ 'ի անօրէնութիւնան Միածնի որդւոյն եւ 'ի սուրբ կոյսն Մարիամ Աստուածածինն եւ 'ի պարծանս քրիստոնէից 'ի սուրբ եւ 'ի կենսակիր եւ յամենազօր խաչն , եւ 'ի պատու կերտ տէրունականս եւ ամենայն սրբոց , զոր քաջ համարին աւանդելով զքրիստոնեայս իբրեւ զմոլորեալս : Նոքա զպս ամենայն տեսանելով եւ լսելով ոչինչ համարին եւ ոչ ցաւ է նոյս , այլ անփայտ ունելով զնոսա զմեօք չըջապատեալ պաշարեն յարկանել 'ի մէջ քրիստոնէիցս աղմուկ խռովութեան , եւ փոխանակ չինութեանս եւ հաստատութեանն՝ արկանեն յովով գայթակղութիւնս ասելով միշտ յակննջս անկատարից եւ անխորհուրդ արանց . թէ « ոչ է պարագն յեր' պարագ , և Տիրոջն Տիրոջն , նշնպէս է խոստովանութիւնն եւ ապաշխարութիւնն եւ այլ խորհուրդ » յորոց բանից նեցուկ առեալ թուլամորթ յողորդք եւ անհատատունք , եւ լաննն 'ի հաւատոց եւ այլ բազումս առնեն անկարողութիւնս ընդդէմ կանոնաց եկեղեցւոյ՝ լուծանելով զպահս եւ զործին զբազում զանազան չարիս , զորս ոչ կարեմք արկանել ընդ գրով . ասելով թէ՛ որովհետեւ սոսք է կրօնս Երեսնէից որպէս եւ նորա ասնն . արասցեն զենք և հաճեացին սերտ յեր , որով հայ-

հոյի անուն Աստուծոյ եւ վարդապետութիւնն 'ի մէջ հեթանոսաց : Ահա այս է պտուղ նոցին արդեանցն եւ զի ստուգադոյնս ասացուք, մեք որ բնակեալ եմք 'ի միջի այսպիսի ազգաց , որ ոչ հաւատան զՔրիստոս Աստուած եւ զպաշտօնեայն Քրիստոսի ոչինչ իւրիւր զգուեցուցանեն զմեզ կամ տառապեցուցանեն , այլ մանաւանդ կան ընդ մեզ խաղաղութեամբ եւ սիրով յաւէտ եւս զի յովմ անդամ ընդ զիմաբանեմք ընդ նոսա եւ վիճեմք յաղագս Աստուածութեանն Քրիստոսի եւ օրինաց նորա . լինիմք ջատագովք քրիստոնէական կրօնից , ոչ ըմբոստանան մեզ , այլ միամտութեամբ ակնածեն զմեօք , առ որոց թաղաւորի իշխանութեամբ մակաղեմք եւ մեք : Տացէ ամենասուրբ թաղաւորն Աստուած հաստատութիւն , թաղաւորութեան խրոյ , որոյ եւ վամն մեք աղօթս ձիգս եւ յաւէժս մատուցանեմք ըստ խրատու մեծին Պօղոսի , զի այնպէս հանդարտութեամբ վարիմք զկեանս մեր , որպէս յաւուրս թաղաւորացն մերոց , մինչ իշխանութիւն մեր էր . եւ սա այլ ազգ է , եւ չո պաշտօնեայ քրիստոնէութեանն հաւատոյ խորհրդոյ . այսպէս զթալով զթայ եւ հախամեծարեալ պահպանէ զմեզ թարց զգուանաց . իսկ առ մեզ եկեալ պապէսն ոչ այնպէս , այլ ներհակութեամբ վարին ընդ մեզ , խոչընդակն լինելով . եւ յորժամ ներհակիմք անկարգ արարմանց նոցին , դուր եւ ունայն բանիւր ամբաստան լինին առ մեծութիւն ձեր , եւ ամիրոք դուով նոցին՝ հաւատայք , քանզի 'ի մէջ այլապետից զՀայս հերձուածող եւ հերետիկոս անուանեն :

Արդ ըստ վերոգրեալ դաւանութեանցն եթէ Մեծապատուութիւն քոյ զՀայս հերետիկոս դատապարտէ , եղիցի կամք քո Վեհապառութեանդ օրհնեալ . իսկ եթէ ոչ , խնդրեմք ամենապատիւ Հօրէդ , որ այսպիսեայն սաստ սպառնալեացն գրեն , որ դադարին յայսպիսի ոխակալութենէ : Եւ զի սրբաղան անուան Տեառնդ , ոչ է վայելուչ այսպիսի իրակութիւնն եթէ վամն յուսոյ եւ սիրոյն Քրիստոսի այդ չնորհք մեզ առնիցես ըստ Հայրախնամ զթոյդ . նոցա թուղթ առաքեմ 'ի ձեռս մեր եւ ընկալեալ մեր իբրեւ զԱստուածատուր պատգամ Մովսիսի , ցուցցուք պապրէսց . թերեւս սակամիկասեցեն յատելութենէ Քրիստոնէից . եւ Տէրդ մեր ընկալցիս վարձքս 'ի վարձատուողէն բոլորեցունց . նա եւս չնորհել մաղթեմ յեկեղեցի Հայոց որ 'ի Վինեակի , քանզի ողորմելի ազգն Հայոց , որք անդր են առանց հաղորդութեան եւ ամենայն խորհրդոց : Դարձեալ որովհետեւ յաջողութեամբն Աստուծոյ միջնորդ խաղաղութեան եւ սիրոյ բարեպաշտ եւ Աստուածասէր առաքեալդ 'ի մեծութենէդ Իսրայէլ անուամբ գեսպան , 'ի սուրբ եւ 'ի Քրիստոսաէջ Աթո-

որս, պատշաճ վարկաբ կրկնակի գրել զնամակս եւ ծանուցանել Սուրբ Հօրդ զաղէտս տարակուսանաց մերոց, զի թերեւս գացուք 'ի Սրբութենէդ եւ 'ի փառաւոր Մեծութենէդ սիրովանս մխիթարութեանց վշտանգեալ սրտից մերոց:

Եւ ոչ այս չափս միայն զորս դրոշմեցաք 'ի քարտիղի ասդէն, այլ եւ բանք յոլովք եւ խորհուրդք բազումք, զոր բերանոյ բանիւ պատմելոց է դեսպանս մեր փառաւոր Տէրութեանդ քո: Եւ պետական Գլուխդ եւ հասարակաց քրիստոնէից անվախ Ախոյեանդ եւ անշիջանելի Ջահդ կաթուղիկէ առաքելական սուրբ Եկեղեցւոյ կացցես եւ մնացես ողջ եւ առողջ 'ի փառս մեծադունի Աստուծոյ 'ի պարծանս Եկեղեցւոյ ամէն:

Գրեցաւ Ռձկ (1160) Թուին Ապրիլ ԺՁ:

Ի դուռն Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի:

ՊԱՏՃԷՆ

Ա. Նաթուլէօն

Մեծափառ Նաբոլէօն խաչապսակ Խնքնակալ օգոստոս կայսր Ճռանսայու սիրող բարեպաշտութեան:

Ողորմած Թագաւոր եւ Պաշտպան Եկեղեցւոց Հաւատացելոց:

Աղօթարար ցանկալի կենացդ եւ Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ Կաթողիկոս ամենայն Հայոց եւ ծայրագոյն Պատրիարք Արարատեան Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, իմանալոյն զօրութեամբ ներկայացեալ առաջի բարձրագոյն աթոռոյ սուրբ Թագաւորութեան Ձերոյ խոնարհ երկրպագութեամբ զհոգեւորական օրհնութիւնս հանդերձ Քրիստոսական ողջունիւ Ձեզ մատուցանեմք:

Յաւիտենից ժամանակաց կայսերք Հռոմայեցւոց մեծագոյն դրթափրութեամբ բարեբար եւ ողորմած են եղեալ միշտ Թագաւորաց եւ քահանայապետաց Հայոց եւ ողջոյն ազգի նոցա եւ մինչեւ ցայսօր ժամանակի անմոռաց ունի Եկեղեցի Հայաստանեայց եւ պարծի նովաւ միշտ, բայց 'ի բազմանալ անտանելի նեղութեանց եւ աշխարհակործան խռովութեանց յԱսիա եւ մահաւանդ յաշխարհս Հայոց որ օր ըստ օրէ զրկեալ յամենայն բարեբաղդութեանց: ահա ճահաւոր ամբ են. զի վասն ժամանելոյ 'ի յետին նուաստութիւն իբրեւ 'ի մոռացօնս եմք ամենալուսափայլ մօտաց հասարակախնամ կայսերաց Հռոմայեցւոց:

Ուրախ եմք եւ առաւելապէս դոհանամք զԱստուծոյ եւ զան-

պատում չնորհաց ողորմութեան նորա, զի բարերար ակնարկութեամբ նորա առ մեզ. եկն 'ի սմին ժամանակի 'ի Քրիստոսաէջ Աթոռ Արարատեան խոհեմութեամբ եւ իմաստութեամբ հռչակեալ դեսպան Զերոյ մեծահրաման կայսրութեան առ բարեբարոյ եւ ողորմածագոյն բարձրատիճան Շահն հզօրաց Պարսից եւ առ յատուկ պաշտպան սրբոյ Աթոռոյս մերում Աբպատ Միրզա որդի նորա ողորմութեամբ եւ մարդասիրութեամբ եւ իմաստութեամբ դերապատուեալ բարձր բարեծնունդ արեգական շշանակիր Ժօմպաթիստ Բուասոս զոր կարեմք հանգունատիպ ընդունել նշան մեծատիպ ողորմութեանն Աստուծոյ, որպէս երբեմն Հայրն աշխարհի զաղաւնին յորժամ 'ի տապան անդր տատանեալ ծփիւր յերեսս յաշխարհեղցոյ ջուրց :

Լաւ եւս կարէ պատմել զմէնջ յիշեալ դեսպանն ամենողորմած Աստուածատիպ սրբոյ կայսրութեանդ. այլ մեք վստահացեալ յԱստուածագութ յողորմութիւնս Զեր Վ. եւ 'ի բարերար ակնարկութիւնս նախնի Աթոռակալաց Զերոյ աստէն 'ի ծագս տիեզերաց 'ի ծունկս անկեալ առաջի ամենողորմած Աթոռոյ Զերոյ բարձրագոյն կայսրութեան որպէս աթոռակալի Քրիստոսի Աստուծոյ մերոյ յանձն առնեմք չնորհաց աշխարհատարած ողորմութեան եւ մարդասիրութեան Զերոյ եւ զԱթոռս Արարատեան եւ զամենայն հոգեւորական եւ զմարմնաւորականս Հայոց եւ ամենախոնարհաբար խնդրեմք, զի ուր եւ տարածիցի ողորմութիւն Աթոռոյ Զերոյ կայսերական մեծութեան եղիցի հովանի ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեաց :

Ողջ լեր Ամենողորմած Օգոստոս սուրբ կայսր եւ մեք յուսով մեծաւ մնամք ողջոյն ազգաւ աղօթարար անգին կենաց Զերոյ եւ վասն բոլոր պալատի Զերոյ :

Օգոստոս Ինքնակալ Զերոյ բարձրագոյն ամենողորմած կայսերութեան

Խոնարհ Ժառայ աղօթարար Կաթողիկոս Կոնստանդնուպոլսեան
Հայոց եւ Ժայռաբոյն Պապրիարք Արարատեան
սուրբ Աթոռոյ սրբոյ Եղիշեանի
Դանիէլ :

'ի 1808 Յունիս 16
'ի Սուրբ Եղմիածնի որ
յԱրարատ

Աւ Կայսր Գերմանացոց խնդիր լաւս հրովարտելի զի քոց յայնչանէ որդ
անէնցն զիքն 'ի Պարբերէն Արարարեան , այլ ու 'ի Կարգաւորաց Հայոց թի'
հարող լեցին հրանել 'ի Տեղ Հայոց եղելոց 'ի սահմանս արեւմտեան խորոց :

Ամենալուսաւիայլ տիրող Խնքնակալ հզօր Կայսր Հռոմաց եւ
Գերմանիոյ Ֆրանց երրորդ .

Ամենողորմած թագաւոր եւ տաշտպան հաւատացելոց .

Աղօթարար անդին կենացդ եւ Յիսուսի Քրիստոսի ծառայ Դա-
նիէլ Կաթողիկոս ամենայն Հայոց եւ ծայրագոյն Պատրիարք Արա-
րատեան Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի ամենալուսնարն երկրպագու-
թեամբ զլիաբերան օրհնութիւնս հանդերձ Յիսուսաւանդ ողջունիւ
Ձեզ մատուցանեմք :

Սէր եւ խնամակալութիւն Կայսերաց Հռոմայեցւոց առ թագաւո-
րս եւ առ քահանայապետս եւ առ ամենայն հասարակութիւն
ազգի Հայոց տարածեալ առատութեամբ յաւիտենից ժամանակաց
յիշատակադրութեամբ նախնեաց մերոց՝ այսօրեւս ներգործէ առ ամե-
նայն ազգն Հայոց զմեծ մխիթարութիւն :

Այլ քանզի օր ըստ օրէ տիրեաց անբաղդութիւնն 'ի վերայ ա-
մենայն հայրենեաց Հայոց՝ բարձաւ թագաւորական ճոխութիւն ,
մատնեցաւ Քահանայապետութիւն յանտանելի տառապանս ընդ բո-
նութեամբ բարբարոսաց եւ ցրուեցաւ ամենայն ազգս Հայոց յերե-
սրս ամենայն երկրի իբրեւ զոչխարս որոց ոչ իցէ հովիւ . պակա-
սեցաւ ամենայն մխիթարութիւն յամենայն հասարակութենէ հո-
գեւորականաց եւ մարմնաւորականաց Հայոց մինչեւ իռպառ եւ ե-
ղաք առ հասարակ ըստ մարդարեական բանի՝ որպէս մեռեալ յա-
ւիտենից եւ որպէս զանօթ կորուսեալ . մոռացեալ 'ի սրտէ յա-
մենայն մեծաց եւ փոքունց բարերարաց հարց մերոց :

Այլ՝ գոհանաւ զԱստուծոյ զի որպէս զերիս մանկունս 'ի մէջ
ղղալի հրոյն Բաբելոնի , նոյնպէս եւ զմանկունս եկեղեցւոյ Հայաս-
տանեայց 'ի մէջ իմանալի հրոյ բարբարոսական բռնութեանց պահ-
պանէ մինչեւ զայսօր ուղղաւառ խոստովանութեամբ Սուրբ Աստ-
ուածութեան իւրոյ :

Շնորհ ունիմք եւ զմեծ ողորմութենէ Ամենողորմած Աթոռոյ
Աստուածագութ կայարութեան ամենայն Ռուսաց . զի 'ի հարիւ-
րաւոր ամաց հետէ յատուկ մարդասիրութեամբ հայեցեալ առ ա-
մենայն անայցելու ազգն Հայոց յաւել ամենայն հոգեւորականաց
եւ մարմնաւորականաց զմեծ ապահովութիւն :

Ի ձեռն ամենողորմած հրովարտակի իւրոյ յուսադրեալ զկա-
թողիկոսն ամենայն Հայոց եւ զիշխանս եւ զքաջազունս եւ զազ-

Նուադգիս եւ զամենայն ազգն Հայոց ունիլ 'ի ներքոյ բարձրագոյն խնամոց եւ հովանաւորութիւն իւրոյ եւ զամենայն ազգն Հայոց եղեալս 'ի տէրութեան իւրում՝ դաւանութեամբ Սուրբ Լուսաւորչին Հայաստանեայց մեծի Գրիգորի Պարթեւի յանձնելով 'ի ներքոյ կարգադրութեան Արարատեան Աթոռոյ Կաթողիկոսին ամենայն Հայոց հոգեւորական կանոնաւ եւ եկեղեցական կարգաւ տարածեաց առ ամենայն կուսակալս սահմանաց տէրութեան իւրոյ զյատուկ հրովարտակ . ոչ ընդունիլ 'ի ներքս 'ի սահմանս Ռուսաց զոր 'ի կարգաւորաց Հայոց որպիսի եւ իցէ աստիճանաւ առանց վկայական գրոյ Արարատեան Կաթողիկոսին . եւ այսպէս շնորհաց ամենայն Հայոց մերձաւորաց զմեծ խաղաղութիւն եւ հեռաւորաց զմեծագոյն միւրթարութիւն :

Առաւելապէս միւրթարեա լինիմք . զի եւ ամենողորմած հովանաւորութիւն Աթոռոյ սուրբ Կայսերութեան Ձերոյ տարածեալ նոյնպէս 'ի վերայ Հայոց եղելոց 'ի սահմանս հզօր տէրութեան Ձերոյ 'ի Սչով քաղաք եւ յայլ եւ այլ տեղիս , անդհուպաշտեալ է զնոսա ոչ սակաւ :

Բայց սակայն այս երեսուն ամ լինի յորմէ հետէ չէ եղեալ 'ի նոսա այցելութիւն Արարատեան Աթոռոյն եւ Կաթողիկոսին ամենայն Հայոց եւ չէ հանգիւղեալ 'ի մէջ նոցա եպիսկոպոս կամ վարդապետ . քարոզիչ եւ վերատեսուչ հաւատոյ եւ եկեղեցական կարգաց եւ չեն ունեցեալ զիմաստուն քահանայ կամ օրէնագէտ ուսուցիչ . առ որ բազում ինչ պակասեալ է 'ի նոսա յուղղութենէ կարգաց եւ կանոնաց եկեղեցւոյ Հայաստանեայց եւ բազում տղիտութիւն եւս ունակացեալ 'ի մէջ ողորմելի ժողովրդեան մերում :

Այլ եւ 'ի վերայ այնորիկ ամի 1807 յամենանն օգոստոս սուտ եպիսկոպոս մի Գրիգոր անուն , որ վասն լինելոյ իւրոյ մասնիչ Արարատեան Աթոռոյն եւ խանգարիչ բարեկարգութեան Հայրենի Ազգին արգելեալ յամենայն հոգեւորական պաշտօնէ արտաքսեալ կայր յեկեղեցւոյ դատաւարանաւ ժողովոյ բազմութեան Արք եպիսկոպոսաց՝ վարդապետաց եւ աւագ երիցանց հարիւրաւորաց 'ի գլուխ 50 ամաց մտեալ առ նոսա խաբէութեամբ , պաշտեալ է 'ի Սչով քաղաք զպաշտօն եպիսկոպոսութեան եւ սերմանեալ է անդէն զլապում տարածայնութիւնս եւ գայթակղութիւնս :

Վասն որոյ քանզի կոչեցեալ եմք մեք հովիւ եւ Կաթողիկոս ամենայն Հայոց 'ի ծունկս անկեալ առաջի ամենողորմած Աթոռոյ Ձերոյ ինչքեմք ամենախոնարհաբար . զի թէ դացէ շնորհս . առաջի սուրբ Կայսերութեան Ձեր եկեղեցի Հայաստանեայց եւ ժողովուրդ սրբոյն Գրիգորի մեծի Պարթեւի , մի խնայես՝ զբարե-

բարութիւնն աթոռոյ սուրբ կայսրութեան Զերոյ 'ի հոգւոյ եւ 'ի մարմնոյ հոգեւորականաց եւ մարմնաւորականաց Հայոց՝ ապաւինելոց 'ի հովանաւորութիւն մեծաշուք հղօր թեւոյ Զերոյ՝ այլ գթացեալ աստուածաբար մարդասիրութեամբ զբարօրութիւնս նախնի կայսերաց Հոռմէացւոց առ ազգն Հայոց, կրկին նորոգեալիք, եւ համաձայն նորին կայսերականի մեծութեան ամենայն Ռուսաց ամենողորմածաբար բարեհաճեալիք կարկառել զմեծ ողորմութիւն Զեր առ ամենեւին եւ յանձնել 'ի ներքոյ կարգադրութեան Արարատեան Աթոռոյ կաթողիկոսութեանն ամենայն Հայոց հոգեւորական կանոնօք եւ եկեղեցական կարգօք զազգն Հայոց եղեալս 'ի Թեւրութեան Զերում զաւանութեամբ սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց, եւ հրամայել սահմանակալաց, զի առանց վկայական գրոց կաթողիկոսին Արարատեան Աթոռոյ, մի ոք 'ի հոգեւորականաց Հայոց ունողաց զաւանութիւն եկեղեցւոյ Հայաստանեայց ընկալցին 'ի ներքս 'ի սահմանս սուրբ կայսրութեան Զերոյ եւ շնորհել նոյնապէս զբարձր հրաման մեծ հրովարտակ հաստատեալ մեծ կնքով ամենաօգոստափառ կայսրութեան Զերոյ առ 'ի պահպանել 'ի տաճարին Աթոռոյ Արարատեան վանս յաւիտեանական յիշատակի ողորմութեան եւ բարեհաճութեան Զերոյ :

Ողջ լիւր ամենողորմած օգոստոս կայսր եւ ողորմութեամբ Աստուծոյ Երկնաւորի եղիցին աւուրք Զեր իբրեւ զաւուրս երկնից ամէն :

Ողորմած թագաւոր Զերոյ կայսերական բարձրութեան :

Խոնարհ ծառայ և աղօթարար
Դանիէլ Կաթողիկոս ամենայն հայոց :

Յամի 4808 յամսեանն . . .

'ի Սուրբ Աթոռն Արարատեան
Եջմիածին

Դարչեալ առ Նորին կայսերական մեծութեան վանս որսուլ կարգելոյ շնորհ
Արք Եղեանիպոս Առաջնորդն Ռուսաստանու ազգին Հայոց եղելոց
ըստ հովանաւորութեան Նորին կայսերութեան :

Կարող եւ բարձր Ինքնակալ կայսր հռոմայ եւ թագաւոր Գերմանիոյ Ֆրանց Գ. Ամենողորմած հովանի եկեղեցւոյ Քրիստոսի :

Ազօթարար Զեր եւ Յիսուսի Քրիստոսի ծառայ եւայլն Քրիստոսական ողջոյն եւ բազմապատիկ օրհնութիւն նուիրեմ խոնարհ երկրպագութեամբ :

Յայտնի է ինքնին իսկ, զի որպէս ոչ ուղիղ ընթանայ նաւ առանց հմուտ նաւարարի, նոյնպէս եւ ոչ եկեղեցին Աստուծոյ կարէ ունիլ ուղիղ կառավարութիւն առանց օրէնադէտ հանճարեղ Առաջնորդի :

Վասն որոյ քանզի այս երեսուն ամ առանց վերատեսչութեան է եկեղեցի Հայոց որք գտանին 'ի ներքոյ հովանաւորութեան ամենաբարեպաշտ սուրբ կայսերութեան Ձերոյ 'ի քաղաքն Սչով զի մինչ իսպառ տիրեցին մեզ մեղք, յաղագս ամենեւին անփոյթ լինելոյ վասն նոցա հարկաւորեալ եղէ այժմ կացուցանել նոցա առաջնորդ եւ փոխանորդ իմ զԱռաջնորդն ամենայն Հայոց Ռուսաստանու գերապատիւ Եփրեմ սրբազան Արք եպիսկոպոսն, որ զլիաւորադոյն է ամենայն հոգեւորականաց Հայոց եւ մերովս Կաթողիկոսական կոնդակաւ յանձնեցաք նմա զհոգեւորական վերատեսչութիւն ամենայն ազգին Հայոց որք գտանին 'ի ներքոյ լայնածաւալ հովանաւորութեան Ձերոյ գաւանդութեամբ եկեղեցւոյ Հայաստանեայց :

Խնդրեմ ամենախոնարհաբար, զի եւ ձերդ կայսերական բարձրութիւն ամենողորմածաբար բարեհաճութեամբ չնորհեսջիք յիշեալ փոխանորդին մերոյ զբարձր հրաման հրովարտակ վասն համարձակ վարելոյ զամենայն գործս հոգեւորականս եւ եկեղեցականս պատկանեալս առաջնորդութեան իւրոյ ըստ կանոնաց եկեղեցւոյ Հայաստանեայց եւ հրամայել ամենայն կայսերական կառավարչաց եւ վերակացուաց ձեռնառլ լինիլ նմա եւ առ 'ի նմանէ կարգեալ գործավարաց յորժամ խնդիր լիցի 'ի նոցանէ առ ինքեանս 'ի պատահմունս հարկաւորացն որք վերաբերիցին առ հոգեւորական կառավարութիւն :

Արդարեւ չնորհ մեծ առնես, որով եւ զբոլոր եկեղեցի Հայաստանեայց պարտաւորեացես ամենողորմած Աթոռոյ սուրբ կայսերութեան Ձերոյ մինչեւ յաւիտեան :

Ողջ լեր օրհնեալ յԱստուծոյ օգոստոս Ինքնակալ եւ որ էօծն զՁեզ պահպանեսցէ զթագաւորութիւն Ձեր անվախճան :

Ամենողորմած Թագաւոր Ձերոյ Կայսերական բարձրութեան,

Աթնախոնարհ Զառայ և աղջնաբար
Դանիէլ Կաթողիկոս ամենայն Հայոց

Յամի Տեառն 1808

յամսեանն Յուլիսի . . . աւուրն

յԱթոռն ամենայն Հայոց

'ի Սուրբ Էջմիածնի

որ յԱրարատ

Թոշիկ շնորհակալութեան առ Կայսր ասենայն Ռուսաց վասն Կաշալէիքն և
ասորեղն շնորհելոյ յասի 1808

Օղոտտաւիառ Ինքնակալ մեծ թագաւոր ամենայն Ռուսաց Ալէք-
սանդր Պաւլովիչ :

Ամենողորմած յոյս եւ պաշտպան ամենայն անայցելու Քրիստո-
նէից :

Անգլին կենաց Ձերոց աղօթարար եւ Յիսուսի Քրիստոսի ծառայ
Դանիէլ Կաթողիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարք Արարատեան
Աթոռոյն սրբոց Էջմիածնի զօրութեամբ հոգւոյ իմոյ ներկայացեալ
առաջի բարձրագոյն Աթոռոյ սուրբ թագաւորութեան Ձերոյ զան-
պատում շնորհակալութիւնս լիաբերան օրհնութեամբ հանդերձ Քրիս-
տոնէական ողջունիւ Ձեզ մատուցանեմ :

Լի է երկիր ամենայն վառօք տիեզերատարած գերազօր կայ-
սերութեան Ձերոյ . լցաք եւ մեք 'ի վառաց անտի զոր Աստուածա-
գութ մարդասիրութեամբ տարածեալ առ մեզ ամենողորմած Աթո-
ռոյ մեծութեան Ձերոյ ճոխացուցիք զիս մեծագոյն վառօք եւ պատ-
ուօք զարգարեալ զմեզ պանծալի նշանաւ սրբոյն Աննայի առաջնե-
րորդ աստիճանի եւ երկնավայլ ճաճանչալեզ տստեղբ զորս 'ի 1200
աւուրն յուլիսի ամսոյն ներկայ ամի հանդերձ 33000 աւուրն Ապրիլի
գրեցեալ ամենողորմած պարզեւագրով բարերար եւ սուրբ կայսե-
րութեան Ձեր ստացաք 'ի ձեռն առաջին կառավարչին Վրաստանու
կողմանց բաղում նշանաց կրօղ կենրալ Ֆէրմարչալ Կրաֆ Խվան Վա-
սիլիչ Կուտովիչի , որ յաղապս արժանաւոր ծառայութեանց մերոց ,
այլ մանաւանդ յաղապս մեծ ողորմութեան եւ մարդասիրութեան
օժեկոյգ Աստուծոյ :

Եւ ոչ այսչափ միայն , այլեւ մեծագոյն ողորմութեան եւ
մարդասիրութեան Ձեր յայանեցիք զիս զարժանաւոր արժանացու-
ցանելով համանդամայն մեծ ողորմութեան Ձերում գերկոսեանն 'ի
հաւատարմաց մերոց զլիովանորդն իմ Եփրեմ գերապատիւ Արքե-
պիսկոպոսն Ռուսաստանու հայոց եւ զհարազատ եւ իմ Յովհաննէս
Արք եպիսկոպոսն Վրաստանու Հայոց կապելով 'ի գլուխս նոցա զպը-
սակ բռիլիանթ պատուական խաչի :

Այժմ ըստ մարդարէին առաւելապէս բարձրացաւ գլուխ իմ
հանդէպ հակառակորդաց իմոց (Սաղմոս) : առ որ եւ դնորայն ձայն
բարձրացուցանել աղաղակեմ , մի է որպէս Աստուածամման սուրբ
կայսրն իմ եւ տէր իմ 'ի ծայրս հիւսիսոց բազմեալ եւ զխոնարհս տե-
սանէ 'ի ծագս տիեզերաց եւ փառաւոր առնէ յարեւելս եւ 'ի Հիւսիս .
Սաղ . ձԺԲ : Ընդ նմին զերգ Սրբուհի Աստուածամօր 'ի բերան առեալ

յնծութեամբ եւ դոհարանութեամբ երդեմ, «Արար ինձ մեծամեծս հղօրն եւ սուրբ է անուննորա եւ ողորմութիւննորա յազգաց յազգս»:

Եւ այսու ամենայնիւ հանդերձ միաբանութեամբ հողեւորականաց իմոց եւ բոլոր ազգաւ Հայոց ճանաչելով զմեզ պարտաւորս ամենամեծ ողորմութեան Ձերոյ միջնորդ առեալ զմայրն ողորմութեան զամենասուրբ Աստուածածինն ազաչեմք զԱստուած որպէս զի նա ինքն յերկնից յԱթոռոց փառաց իւրոց առատաձեռնեացէ 'ի Ձեզ եւս քան զեւս առաւելապէս փառս եւ զճոխութիւնն եւ ամենազօր բազկաւ իւրով եղիցի հովանի 'ի վերայ ամենողորմած Աթոռոյ սուրբ կայսերութեան Ձերոյ եւ պահպանեացէ զանդին կեանս Ձեր հանդերձ բոլոր ժողանդակցօք իւրապարզեւն պալատականս Ձերոյ ընդ երկայն աւուրս հղօր եւ բարձր թաղաւորութեամբ ամէն:

Ողջ լեր ամենալուսափայլ Օգոստոս Խնքնակալ եւ մեր եմք եւ մնամք ողջոյն ազգաւ Հայոց

Ամենողորմած սուրբ թաղաւորութեան Ձերոյ

Աթնահայասիւք և ջերեւանդ ծառայ և աղօթարար

Դանիէլ Կախիկեան աթնայն Հայոց

'ի 1808 օգոս . 11

'ի Քրիստոսահիմն Աթոռն ամենայն Հայոց

սուրբ Եջմիածնի, որ յԱրարատ

Աստուծոյն աթնայն Ռուսաց ժանն զԵփէմ՝ Արքեպիսկոպոսն Կարգելոյ
առաջնորդ 'ի վերայ Ռուսելոս:

Ամենալուսափայլ թաղաւոր կայսր ամենայն Ռուսաց Խնքնակալ կիսադնդին աշխարհի Այէքսանտր Պաւլովիչ

Պաշտպան եւ այցելու ամենայն անօգնական ազգաց Քրիստոնէից եւ յատուկ իննամակալ իմ եւ աթոռոյն Արարատեան եւ ամենայն Հայոց ազգի իմոյ:

Անդին կենացդ աղօթարար եւ Յիսուսի Քրիստոսի . . . ողջոյն Քրիստոսական հանդերձ ջերմեռանդ օրհնութեամբ մատուցանեմք ամենախոնարհ երկրպագութեամբ:

Որովհետեւ յոյս ամենայն հաւատացելոյ բարեգութ Աստուած ողորմեալ ժողովրդեան իւրոյ բնակելոյ 'ի սահմանս Մօլտավիոյ եւ Վալաքիոյ եւ այլոց . ժողովեաց զնոսա 'ի ներքոյ ամենաբարձր հովանաւորութեան աիեղբրատարած թեւոց ամենողորմած եւ բարեբար Սուրբ պատկերի իւրոյ Ձերոյ կայսերական մեծութեան . ուրախ եմք առաւելապէս եւ ազաչեմք զմարդասէրն Աստուած զի այնմիկ ողորմութեան նորա արժան արասցէ եւ զբնակեալսն յԱրարատ եւ ամենայն սահմանս Հայաստան աշխարհի:

Այլ քանզի բազում են 'ի յիշեալ սահմանսն ժողովուրդք 'ի մեր յազգէ դաւանութեամբ եկեղեցւոյ Հայաստանեայց որոց հարկաւոր է արժանաւոր հոգեւորական կառավարիչ եւ բարեբարոյ վերատեսուչ . վասնորոյ մեք մերովս կաթողիկոսական կոնդակաւ , որպէս 'ի վերայ ամենայն ժողովրդեան Հայոց բնակելոց 'ի Ռուսաստան , նոյնպէս եւ 'ի վերայ Հայոց բնակելոց 'ի Մօլտավիա եւ 'ի Վալաքիա եւ յայն կողմանս կարգեցաք Առաջնորդ եւ վերատեսուչ զփոխանորդն մեր գերապատիւ Եփրեմ սրբազան Արքեպիսկոպոսն եւ ամենախոնարհաբար խնդրեմք յամենաողորմած բարերար սուրբ կայսերութենէ Ձեր . զի ամենաբարձր կայսերական հրովարտակաւ հրամայեսցիք ամենայն կառավարութեանց կողմանց այնոցիկ ձեռնառու լինիլ յիշեալ գերապատիւ փոխանորդին մերոյ յամենայն հարկաւոր պատահմունս հոգեւորական կառավարութեանց :

Ամենողորմած թագաւոր Ձերոյ կայսերական բարձրութեան

Ամենախոնարհ Ժառայ ազնւարար

Իսնիկէլ Կաթողիկոս ամենայն Հայոց

ի 1808 օգոստոս . . .

յԱթոռն Արարատեան

'ի Սուրբ Էջմիածին

Ա. Կայսրն իսն յիշեալ Եփրեմ Արքեպիսկոպոսն յազգս Կայսրեանէն
յԱթոռն Կաթողիկոսութեան :

Ամենալուսաւորալ ինքնակալ Կայսր ամենայն Ռուսաց Ալէքսանդր Պաւլովիչ

Ամենողորմած յոյս եւ ակնկալութիւն հոգեւորականաց եւ մարմնաւորականաց Հայոց .

Մեծ են ողորմութիւնք Ձերոյ Կայսերական մեծութեան 'ի վերայ իմ եւ 'ի վերայ սրբոյ Աթոռոյն Արարատեան , վասն որոյ քանզի օր ըստ օրէ ծանրանայ հիւանդութիւն 'ի վերայ իմ , ամենախոնարհաբար խնդրեմ 'ի սուրբ կայսերութենէ Ձերմէ , զի որովհետեւ ժողովն հոգեւորականաց եւ մարմնաւորականաց սրբոյ Էջմիածնի եւ Արարատեան նահանգի ընդ իս եւ զգերապատիւ եղբայրն իմ Եփրեմ Արքեպիսկոպոսն ընտրեալ էին արժանաւոր Աթոռոյ Կաթողիկոսութեան ամենայն հայոց յամի 1800 եւ ամենայն ազգն Հայոց ստորագրեալ են գնոյն որպէս յայտնի եղեալ է տիեզերաքննին սուրբ կայսերութեան Ձերոյ 'ի վաղուց , ամենողորմած մարդասիրութեամբ բարեհաճեսցիք առաքել զնա կանխաւ յԱթոռն Արարատեան առ մեզ :

Եւ եթէ լինիցի զի արժանի եղէց տեսանել զնա բաղդաւոր

համարիմ զիս նստուցանել զնա 'ի տեղի իմ յԱթոռ Կաթողիկոսութեան սուրբ Էջմիածնի մինչդեռ իցեմ կենդանի . իսկ եթէ օրհաս մահու կանխաւ ժամանեցէ 'ի վերայ իմ, խնդիր է իմ յամենողորմած սուրբ Կայսերութենէ Ձերմէ արժանացուցանել զնա յԱթոռ Կաթողիկոսութեան Արարատեան 'ի տեղի իմ :

Ամենողորմած սուրբ Թագաւոր Ձերդ Կայսերական մեծութեան

Խ . Ծ . Է աղջնարար Դանիէլ Կ . Խանայն Հայոց

Ի դիմաց յաբանութեան Առ Կայսրն Խանայն Ռուսաց

Տիեզերահրաման ամենողորմած Խնքնակալ Կայսր ամենայն Ռուսաց Ալէքսանդր Պաւլովիչ

Բարեգութ Թագաւոր եւ ապաւէն ամենայն անայցելու ազգաց Քրիստոնէից .

ՅԱրքեպիսկոպոսաց սուրբ Ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի սուրբ Էջմիածնի եւ յամենայն միաբանութենէ հոգեւորականաց եւ մարմնաւորականաց Արարատեան : Ամենախոնարհաբար խնդիր : Հաճութեամբ զգամբ զմեծ ողորմութիւն Ձեր զոր աստուածաբար մարդասիրութեամբ տարածանէք 'ի վերայ սրբոյ աթոռոյ եւ անայցելու Ազգի մերում եւ աղօթեմք միաբան ամենեքեան , որպէս զի Թագաւորն Թագաւորաց ամենակարողն պահպանեցէ զանգին կեանս Ձեր ընդ երկայն աւուրս եւ հաստատուն արասցէ Աթոռ ամենողորմած Թագաւորութեան Ձերոյ յաւիտեանս յաւիտեանից :

Յուսացեալ 'ի մեծ ողորմութիւնս Ձեր համարձակիմք յայտնել Ձերոյ Կայսերական մեծութեան , զի սրբազնակատար Դանիէլ Կաթողիկոսն ամենայն Հայոց օրհնելով զկեանս Ձեր եւ զամենայն պաւտականս եւ զԱթոռ սուրբ Կ . Ձերոյ հանդեաւ առ բաղձալին իւր երկնաւոր Քահանայապետն Քրիստոս Գ . հոկ . 1808 ամի տեառն (հոգեւորականաց եւ մարմնաւորականաց) :

Եւ 'ի տեղի նորա ժառանգաւոր Աթոռոյ Կաթողիկոսութեան ամենայն Հայոց , որպէս յառաջագոյն յամի տեառն 1800 զհետ երկնային փառացն արժանաւոր յիշեալ հանդուցեալ Կաթողիկոս յամենայն միաբանութենէ հոգեւորականաց եւ մարմնաւորականաց Հայոց ընտրեալ եւ յատկացուցեալ էր զպատուելագոյնն 'ի մէջ հոգեւորականաց Հայոց բարձր Սրբազան Եփրեմ Արքեպիսկոպոսն Ռուսաստանու Հայոց . եւ յամի 1808 կրկին եւս վերահաստատուելով զնոյն հանդուցեալ Կաթողիկոսն մեր համաձայնութեամբ մերումս միաբանութեան ամենախոնարհաբար մատոյց զխնդիր առ

ամենողորմած Աթոռն Զերոյ Կայսերական Մեծութեան վասն արժանացանելոյ զնա Կաթողիկոսութեան Արարատեան Աթոռոյ :

Այժմ եւս յետ վախճանի նահատակ Կաթողիկոսի մերում համաձայն օրինաց մերոյ ամենայն միաբանութեամբ հոգեւորականաց եւ մարմնաւորականաց Արարատեան աշխարհին զբաղմակնիք խնդրանաց զիր մատուցեալ առ իշխողն սահմանաց մերոյ , ընկալաք 'ի նոցանէ զգիր հաճութեան եւ հրաւիրանաց առ ընտրեալ Հայրապետն մեր Եփրեմ եւ հանդերձ Նոքօք եւ համագգային բաղմակնիք գրութեամբք առաքեցաք 'ի դիմաց մեր ամենեցուն հրաւիրակ Նորին բարձրագոյն Սրբաղնութեան զՍրբազան Ռաթէոս Եպիսկոպոս եղբայրն . (ձեռն եղի) :

Վասն որոյ ամենախոնարհաբար խնդրեմք 'ի Զերոյ ամենողորմած Կայսերական Մեծութեան զբարերար ակնարկութիւն Զեր անխոյրի ունիլ Արարատեան Աթոռոյն եւ աշխարհին համօրէն Հայոց Ազգի եւ յատուկ մարդասիրութեամբ արժանացուցանել զգերապատիւ բարձր Սրբազան Եփրեմ Արք եպիսկոպոսն յԱթոռ Կաթողիկոսութեան ամենայն Հայոց եւ ճանապարհորդել զնա առ մեզ ամենաողորմած պատմիկ եւ արժանաւոր չքով Կաթողիկոսութեան որպէս յուսամք : եւ ակն ունիմք մեք եւ ամենայն բնակիչք կողմանցս այսոցիկ յամենաողորմած Աթոռոյ Քրիստոնէից պարձանք Սուրբ Կայսերութեան Զերոյ : (Սուրբ Ժողովոյն Էջմիածնի) :

Զայլ հարկաւորեալ խնդիրս մեր յայտնէ ամենախոնարհաբար Սրբոյ Էջմիածնի եւ մերումն հասարակութեան Վէրիլ հարազատ Պօղոսման Զերոյ Կայսերական Մեծութեան Վեհազնեայ Մին է Լազրիչն Լազրեան . վասն որոյ յուսացեալ 'ի բարեղութ Ս. Կ. Զեր խնդրեմք շնորհ ունիլ 'ի վերայ նորա եւ զաղերսանս մեր 'ի ձեռն նորա ընդունիլ ամէն :

Ողորմածաբար Զեզ 'ի հաճոյս :

Պմենաողորմած Սուրբ Կայսր Զերոյ Կայսերական մեծութեան :

Ամենախոնարհ Ժառայք Արք Եպիսկոպոս Սուրբ Ժողովոյն
Բարձրագոյն Խորհրդարանի Սուրբ Էջմիածնի եւ
ամենայն հոգեւորականի եւ մարմնաւորականի
Հայոց Արարատեան
Առաջին Անդամ եւ Երեսփոխան
Բարեւել Արքեպիսկոպոս

յԱթոռն Արարատեան 'ի Սուրբ Էջմիածին :

Յամի Տեառն 1866 Փետրուար 20

Մեծ Նապօլէօն Խաչատուր Ներսիսեան Կայսր Սիրող բարեպաշտութեան :

Ամենաողորմած Թագաւոր եւ պաշտպան հաւատացելոյ .

Շնորհք եւ ողորմութիւն եւ բարերար ակնարկութիւն Կայսերաց Գաղղիացոց 'ի ժամանակս յառաջինս եղեալ է առ Թագաւորն եւ առ Քահանայապետս եւ առ բոլոր Ազգն Հայոց յոյժ առատութեամբ զորոց լաւ եւս քան զմեզ կարող էք զլուել 'ի նախնեաց պատմութեանց :

Բայց յօրէ վերջնաւոյ Թագաւորական ճոխութեան Հայոց մինչեւ յայսօր ժամանակի թէպէտ ջերմեռանդութիւն սիրոյ Քահանայապետաց եւ ազգի Հայոց կայ մնայ նոյնպէս հաստատուն կերպիւ , այլ պտակ ջերմեռանդութեան նոյնն նշան քաղցր ակնարկութեան Տիեզերակալաց Գաղղիացոց նաեւ զիր ողորմութեան անդամ բոլորապէս վերջացեալ , կարօտ եմք աղբոյլին եւ համարիմք մեզ այն անբաղդութիւն 'ի վերայ անբաղդութեան :

Առիթ յնծութեան եղեւ բազմավիշտ հողեւորականացս եւ Արարատեան Աթոռոյն Էջմիածնի մինչ յամին 1804 , լուր եհաս յաւանջս մեր , թէ զիր ողորմութեան Ձերոյ Կայսերական բարձրութեան ունիմք ստանալ , այլ եւ այն մնացաք կարօտեալք , քանզի բռնչին Պայազիտոյ սղան զՅովսէփ անուն զբարբերն յազդէ Հայոց եւ 'ի կորուստ դնային ամենայն զրութիւնք որք ընդ նմա :

Բարեբաղդութեան սկիզբն համարեցաք մեզ յորժամ յամի 1808 Յունիս 16 դտաւ 'ի Սուրբ Աթոռս Արարատեան հաւատարիմ ծառայ Ձեր Կայսերական Մեծութեան Արեւական նշանակիր Ժօմարտ Բուսասօն ընդ որում յաւիտենից փառացն արժանաւոր Քահանայապետս եւ Կաթողիկոսն ամենայն Հայոց Դանիէլ ամենախոնարհաբար զրով մատոյց զջերմեռանդութիւն իւր առաջի ամենաողորմած Աթոռոյ Ձեր Կայսերական Բարձրութեան այլ մինչեւ յայսօր տակաւին չունիմք զծանօթութիւն եւ ոչ վասն այնորիկ :

Ուրախութիւն մեծ նոր կրկին ընծայեցաւ տառապեալ հողեւորականացս բազմութեան մինչ 'ի սմին ժամանակի եւս թերեւս նշան առ մեզ յատուկ ողորմութեամբն Աստուծոյ որպէս պատկեր Աստուածաման Սուրբ Կայսերութեան Ձեր եկն 'ի քահանայապետական Աթոռ Արարատեան վասն այցելութեան անայցելու հողեւորականաց եւ բազմութեան Սուրբ տաճարին Աստուծոյ բարձրագոյն փառօք եւ պատուօք վերահռչակեալ ձէնէբալ Գարաանօ Էտզըզան դեսպան Տիեզերական Տէրութեան Ձերոյ առ Շահն պարսից : Մեք թէպէտ եմք այժմիկ առաւելապէս եւս տարակուսեալք , յայսմ

յիշեալ Քահանայապետն մեր եւս թողեալ վասն Ձեր զիւր բազմապատիկ օրհնութիւնն հանգեալ ինքն առ բաղձալին իւր Քրիստոս եւ փոխանորդն նորա յատկացեալն վասն Քահանայապետութեան Հայոց Եփրեմ Արքեպիսկոպոսն Ռուսաստանու Հայոց դեռ եւս ոչ ժամանեաց յԱթոռ իւր, այլ այսու ամենայնիւ մեք համագումարեալ հոգեւորականք Հայոց Արքեպիսկոպոսք, Եպիսկոպոսք, Վարդապետք եւ Կղերք բոլորեալ ջերմեռանդութեամբ աղօթարարք վասն ամենաողորմած Աթոռոյ Սրբոյ Կայս. Ձերոյ ամենախոնարհաբար երկրպագութիւն մատուցանելով Ձերում Կայս. Բարձր. որպէս փոխանորդի երկնաւոր թագաւորին մերում Աստուծոյ յանձն առնեմք չնորհաց աշխարհատարած ողորմութեան ձերոյ զմեզ եւ զԱթոռս Արարատեան Սուրբ Էջմիածին եւ զամենայն զհոգեւորականս եւ զմարմնաւորականս ամենայն Ազգի Հայոց եւ ամենախոնարհաբար խնդրեմք, զի վերափն նորոգեալ զնոյն չնորհ նախնի թագաւորաց Ձերոց Աթոռակալաց չնորհք ընդիցիք յատկապէս ՚ի վերայ Քահանայապետական Աթոռոյ ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնի, որ յԱրարատ: Այլ եւ աղաչեմք եւ պաղատեմք, զի ուր եւ տարածեցի ողորմութիւն Աթոռոյ Ձերոյ Կայսերական Մեծութեան եղիցի հովանի Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց:

Չայս որպիսութիւնս մեր կարէ պատեւել բերանով յիշեալ Գերապատիւ Դեսպան մեծ Տէրութեան Ձերոյ որ եղեւ ակահատես եւ հասու բաւականապէս:

Ողջ էր Ամենաողորմած ՕԳՈՍՏՈՍ Սուրբ Կայսր եւ մեք յուսով մեծաւ մնամք ողջոյն աղդու աղօթարոր վասն անգին կենաց Ձերոց եւ վասն բոլոր Պալատի Ձերում:

Օգոստոսիառ Խնդնակալ Ձերում բարձրագոյն ամենողորմած Կայսերութեան

Խնարհ ծառայչ եւ աղջնարարք Արք. Եպիսկոպոսք
Սուրբ Ժողովոյն Բարձրագոյն Խորհրդարանի
Սրբոյ Էջմիածնի

Բաբել Արք. Եպիսկոպոս Զափէ՛ Արք. Եպիսկոպոս
Սեֆէն Արք. Եպիսկոպոս Անդրէաս Արք. Եպիսկոպոս
Ալեքսան Արք. Եպիսկոպոս Յովնանէս Արք. Եպիսկոպոս
Ներսէս Արք. Եպիսկոպոս

՚ի 4809 Ապրիլ 25

՚ի Ս. Էջմիածին:

Թողն առ դեռալան Անկէպացոց որ 'ի Բաղդադ շնորհալուրեան վան
առաքել լ բարերարութեանցն յաղաքս գոթելոյ զմարմն նոյնի Յակոբ Արքեպե-
կոսոսի 'ի գերեզմանէ հասարակաց եւ յեկեղեցին Բաբելոնի այլե ինքի յաղաքս
հոգացողութեան ճանապարհորդութեան Վրթանէս վարդապետի եւ արշակման հայոց
Անուոյն զոր եղեալ էին առանդ առ ինքն իշխանս Հայոց Հնդկաստանի :

Ազնուապատիւ եւ շքեղաշուք Ռէզիտէնդ Ըարձր եւ անյաղ-
թելի աղգին Անկլիսացոց Կլաւտիոս Յակոբ Ռիչչի

Ողորմած տէր իմ .

Ազոթարար Ձեր եւ Յիսուսի Քրիստոսի ծառայ Եփրեմ Կաթո-
ղիկոս ամենայն Հայոց եւ ծայրագոյն Պատրիարք Արարատեան Աթո-
ռոյն Սրբոյ Էջմիածնի բազում յարգանօք նուիրեմք ողջոյն Քրիստո-
սաւանդ 'ի տէր խնդալ :

Յառաջագոյն հանդուցեալ դերապատիւ Յակոբ Արք եպիսկո-
պոսն բազմիցս գրեալ էր մեզ եւ առ նախորդն մեր վասն մեծա-
գոյն բարերարութեանց Ձերոց զորս առաւելապէս տարածեալ էիք
'ի վերայ իւր համանդամայն եւ 'ի վերայ Արարատեան Աթոռոյ ա-
մենայն Հայոց պահպանելոյ 'ի ներքոյ մեծաշուք հովանաւորութեան
Ձերոյ զինքն եւ զկայսն նուիրեալս 'ի ժողովրդոց Հայոց յանուն
սրբոյ աթոռոյս , որովք եւ մեր ծանուցեալ զմեզ պարտաւոր
Ձերում բարերարութեան , ունիմք միշտ զՅերմեոանդութիւն մեր
դէպ առ Ձեզ՝ հանապազորդեան բազմապատիկ օրհնութեամբ . բայց
որպէս եւ լուեալ էք կանխաւ խկ , աշխարհն ըստ իւր անակնուռնե-
լի բերմանց մինչեւ յայսօր ժամանակի ասպէս ըսնացաւ 'ի վերայ
մեր եւ սրբոյ Աթոռոյ Արարատեան զի եւ ոչ զշնորհակալութիւն
մեր կարողացաք մատուցանել Ձեզ գրով միով :

Այժմ եւս իրեւ եկեալ ժամանեցաք մեք յԱթոռ Արարատեան
գտաք աստ գըմնի գրութիւնս բարձրապատիւ արքանապատիւ
Վրթանէս վարդապետի հաւատարմին մերոյ որով պատմէ գարձեալ
վասն զանալան բարերարութեանց Ձերոց առ հասարակութիւն
Հայոց աղգի մերոյ , որք 'ի կողմանդ , եւ առ ինքն յատկապէս
յոյժ յոյժ առաւելութեամբ ըստ որոյ եւ 'ի վերայ ամենայնի նշան
Չերմեոանդ քրիստոնէութեան յատուկ մարդասիրութեամբ յօժար-
եալ էք 'ի գերեզմանէ՝ հասարակաց անդրափոխել զմարմնն հան-
գուցեալ Յակոբ Սրբազան Արք եպիսկոպոսին 'ի սուրբ եկեղեցիս
Հայոց , որ է արդարեւ Աստուածաման բարերարութիւն մինչ նա
է խկապէս բարերար եւ այցելու ննջեցելոց հաւատացելոյ 'ի սուրբ
Աստուածութիւն իւր :

Լիաբերան գոհարանութեամբ մատուցանեմ զփառս Քրիստոսի

Աստուծոյ մերոյ որոյ ամենաուրբ անուամբն տարածանի միշտ այդպիսի քրիստոնէականելուչ շնորհ ձեր առ ողորմելի աղօքն մեր Հայոց . եւ անթերի ջերմեռանդութեամբ հողւոյ մատուցանեմք Ձեզ շնորհակալութիւնս կատարեալ բաւականութեամբ , համանդամայն եւ անօթն առնեմք , զի Քրիստոս ճշմարիտ յայսն հաւատացելոյ զիւր ինքեան համարեսցի զամենայն զշնորհս եւ զբարերարութիւնս Ձեր առ անայցելու աղօքն մեր Հայոց եւ առ սիրեցեալն ամենայն աղօքի Հայոց գերապատիւ Յակոբ Սրբազան Արք եպիսկոպոսն եւ առ ձեռնասուն նորին բարձր արժանապատիւ Վարդապետութեան Վարդապետն ըստ իւրումն անսուտ բանի , զի զոր արարիք միում 'ի փոքրկանցս յայսցանէ յանուն իմ ինձ արարիք :

Եւ փոխանակ այնորիկ առատացուցէ 'ի վերայ Ձեր զիւր բազմարդիւն Աստուածեղէն շնորհն հաստատուն պահպանեսցէ զԱթոռ թագաւորութեան Պրիտանիոյ յաւիտեանս յաւիտենից եւ զՁեզ ըզբարեհոյակ բարերարք մեր պահպանեսցէ ընդ երկայն աւուրս հզօր եւ բարձր իշխանութեամբ եւ փառաւոր նախադահութեամբ ամէն :

Կէր ոչ զազարիմբ մատուցանելոյ 'ի վեր զաղօթն առ Աստուած բոլոր միաբանութեամբ վասն կենաց եւ վասն առողջութեան Ձեր , այլ խնդրեմք . զի եւ դուք մի նուազեցուցիք զգուլ եւ զմարդասիրութիւն Ձեր առ ողորմելի աղօքն Հայոց այլ տեղի յուսոյ եւ ապաւինութեան 'ի փառս սուրբ Անուան Քրիստոսի Աստուծոյ . բաց յորոյ ոչ դոյ բնաւ աղօքի Հայոց այլ տեղի յուսոյ եւ ապաւինութեան : Այլ եւ յատկապէս խնդրանքս յանձն առնեմք Ձեզ զբարձր Արժանապատիւ Վարդապետն վարդապետն հաւատարիմն մեր . եւ զՍուրբ Աթոռն Արարատեան եւ խնդրեմք , զի բարերար ակնարկութեամբ ձեր շնորհ ունելով առ մեզ եւ առ բազմալիշտ բազմութիւն հոգեւորականաց մերոյ խնամ տարջիք զյիշեալ վարդապետն հանդերձ կայիւք զրկեալ եւ կողոպտեալ քրիստոսահիմն սուրբ Աթոռոյս , ճանապարհորդել կանխաւ առ մեզ . քանզի իսկապէս ըստ ամենայնի գոյաթափ եւ պակասաւոր է սուրբ Աթոռն եւ յիշեալ վարդապետն եւս յոյժ հարկաւոր է աստ յայսմիկ նեղութեան ժամանակի Աթոռոյն , յաղաղս որոյ զրեցաք ընդ այսմ եւ առ մերազնեայս , որոնց արժանն է :

Յիրաւի յիշատակ թողիք Ձեզ 'ի մէջ ամենայն աղօքին Հայոց անցեալ բարերարութիւնս Ձեր , այժմէն զկնի եւս ընդ նոսին ունիք կարգել Ձեզ արձան յիշատակի յազգս յազգաց զոր ունիք բարերարել նեղեալ եւ լշտացեալ աղօքի Հայոց եւ տառապակիր հոգեւորականացս բազմութեան 'ի փառս Քրիստոսի յուսոյն հաւատացելոյ :

Ողջ լեր գերահռչակ կլաւորոս եւ բարերար Ռէզիտէնտ եւ մեք
եւ մեք եւ մնամք վառն Զեր միշտ բարեացապարտ եւ աղօթարար,

Կաթողիկոս Կաթողիկոս Կաթողիկոս
Եւ Կաթողիկոս Ռոմայ Կաթողիկոս Ա. Կաթողիկոս
Եւ Կաթողիկոս:

Ի 14 յունվարի 1811 ամի.

Ի Սուրբ Աթոռն Արարատեան Եջմիածին:

Այսպէս կը պատմէ, Հայոց պապական պատմիչը Հայր
Միքայէլ Զամէնցը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Աղէքսանդր
առաջնոյն Հռովմայ պապին գրած թղթի եւ նրա հետ ունե-
ցած յարաբերութեանց մասին:

«Մինչդեռ, կասէ Զամէնցը, տակաւին տեւէր վրդ-
վումն՝ որ ի պատճառս Աւետիք վարդապետի⁽¹⁾, վախճանե-
ցաւ Նահապետ Կաթողիկոս յամի Տեառն 1703 եւ ի թուին
Հայոց ՌՃԾԻ (1134) ի Յունիսի 13 յաւուր չորեքշաբթու,
կացեալ ի հայրապետութեան ընդ ամենայն ի մահուանէ ան-
տի Եղիազարու ամս 14 կամ ամս 13 եւ ամիս 10 եւ մնաց
աթոռն պարապ աւելի քան զտարի մի, զի ոչ յաջողէր ընտ-
րութիւն Կաթողիկոսի, այլ յետոյ կարգեցաւ Կաթողիկոս Տ.
Աղէքսանդր Զուղայեցի: Սա ինքն Աղէքսանդր յառաջ քան
դնտել իւր յաթոռ հայրապետութեան՝ ունէր ընդդիմու-
թիւն առ Քաղկեդոնականս եւ առ աթոռն Հռովմայ, եւ գըր-

(1) Սուտ կասէ Զամէնցը, փոխանակ ատելու ի պատճառս Յիսուսեանց,
ատում է ի պատճառս Աւետիքի: Աւետիք պատրիարքն Պօլսոյ պատրիարքներէն
ամենէն քերթեալ, ամենէն ընտրի եւ քաջ հովիւներէն մինն է եղել ամեն ճիշդ
թափել է պապականութեան դէմ առնելու, որն որ Յրանսիոյ Պապական թա-
գաւորներէ գեապաններէ պաշտպանութեամբ Պօլսոյ մէջ մանաւանդ Հայոց մուտ
գտաւ, երկու դար շարունակ երկպառակութիւն, ատելութիւն սերմանելով մեր
Աղգայնոց մէջ, որոնց պատճառ սուտապատում Զամէնցը միշտ մեր պատրիարք-
ներն ու կաթողիկոսները կը դնէ, եւ տեսնել չուզէր Յիսուսեանց ցանած երկպա-
ռակութեան որոմները խեղճ Հայոց ժողովրդին մէջ: Ըստ իրան, նա է, իմաս-
տուն, խոհեմ, խաղաղար Պատրիարք կամ Կաթողիկոս, որ աչք կը խփէ Յի-
սուսեանց արածներին վրայ, եւ յարաբերութիւն կանէ նրանց հետ, թուղթ հը-
պատակութեան կը գրէ պապին, որ երբեք չէ եղել ոյգ բանն, ինչպէս Աղէք-
սանդր Առաջնոյն թուղթը ցոյց կը տայ այս տեղ. բայց իրանք ունին եղել փր-
փականապառ գիւտում, կարող են շատ շինովի գրուածներ ունենալ եւ մի
նրանցով խաբել ինչպէս շատ անգամ արել են այդ բանը, ոչ միայն Հայոց հետ
այլ ուրիշ աղբաց հետ: Իսկ հակառակասէր խաղաղար Կաթողիկոսներն ու պատ-

եալ իսկ էր գիրք մի փոքրիկ հակառակ բանիւք, որոյ ընդ-
գէմ արար զայլ գիրք Ստեփանոս Դաշտեցի 'ի նոր Զուգայէ,
մի առ մի պատասխանի տալով բանից նորա խմաստութեամբ:

» Այլ յորժամ նստաւ Աղէքսանդր յաթոռ կաթողիկոսութեան,
'ի բաց եթող զառաջին ընդդիմութիւն իւր, և կա-
լաւ սէր մեծ ընդ առաքելական դահլին Հռովմայ, և եցոյց
պատիւ Լատին կրօնաւորաց՝ որք հանդիպեցան յէջմիածին,
և զկնի սակաւուց՝ յամի 1709, ՌՃԾԸ 'ի Փետրուարի 23, յղեաց
գիր «նոյ և յարգութեան (սուտ) առ սրբազան Պապն Կղեմէս ԺԱ.
'ի դիմաց իւրոց և 'ի դիմաց հասօրէն Վարդապետաց և Բովնարայ հօրի
էւրոյ, յորժամ ընդունելով զՀռովմայ հայրապետն լինել փոխանորդ Քրիստոսի
և յամբար Պետրոսի վէճ, (սուտ) անուանէ զնա երկոյս երջանիկ
տիեզերական հայրապետ և պետական գլուխ, գերիշխանա-
կան մեծութիւն և դերագոյն նախագահութիւն, հայր հա-
սարակաց քրիստոնէից և անշիջանելի ջահ կաթողիկէ և ա-
ռաքելական եկեղեցւոյ: Եւ առաջի եղեալ զսէր իւր և
զիւրայնոցն առ սրբազան դահն Հռովմայ, ինդրէ՝ զի ըստ
հայրախնամ գթոյն արժանի արասցէ առաքել զփոխադարձ
պատասխանի յաթոռն սրբոյ էջմիածնի, և մեք ասէ ընկալ-
ցուք զթուղթ ձեր իբրեւ զաստուածատուր պատգամս Մով-
սիսի. (այս սուտ չէ այլ ճէզուլիթական ճարտարութեամբ հիւ-
ստած բան. դեննք այս էլ Դաշտեց թղթի կարգը):

» Այս նամակ յորժամ եհաս 'ի Հռովմ, անդ դտաւ Յա-

րիարքները, ըստ Չամչեանցի, նրանք են որ ինչպէս է Աւետիք պատրիարքը և
ուրիշ նրա նմանները, պապականութեան տարածուելուն Հոյոց մէջ դէմ են դրել:
Աւետիք պատրիարքն մասին, Չամչեանցն ինչ սուտեր է հիւսել իր պատմութեան
մէջ արդէն ցոյց տուած ենք մեր ազգայնոց, հրատարակելով մի մահաբաժնի նրա
աներեւոյթ լինելէն յետոյ գրուած Պօլսոյ ազգայնոցմէ, առ Աղէքսանդր իկաթո-
ղիկոս ամենայն Հոյոց: (Տես Կոռնիկ Հոյոց աշխարհի հանդիսի 1863 թուի 663
երեսը, Աղբիւր ազգային արդեան պատմութեան վերնագրով յօդուածը):

Իսկ միւս Աւստրիոյ, Ֆրանսիոյ և Ռուսիոյ կայսերաց գրուած թղթերը
ցոյց կը տան, մեր կաթողիկոսների ունեցած խնամքը մեր վրայ և նրանց արած
ջանքը մեր բարոյական ապահովութեան համար. Դանիէլ կաթողիկոսի գրած
թուղթը Ֆրանց կայսեր, ինչպէս քաղաքավարական է, չէ համարձակում հով-
ուսպետը բողոքել կայսեր դէմ թէ պապական եկեղեցականք իր տէրութեան
տակն եղող Հոյոց ժողովրդին խաբում են, որսում են և տանում իրանց փարսիք,
իրանք իրանց բուն Հայ ձեւացնելով, որպէս զի չլինի որ քահանայապետ կայսրը
վերաւորուի իրմէն. թէ ինչ հետեանք ունեցան այս զգուշութիւնքը ու լուռութեամբ
ինդիքը, Աւստրիոյ Հոյոց այսօրուայ վեճակը ց ոյց կը տայ բանադէտ Հայուն:

կոր Վիլյոդ Լատին կրօնաւոր 'ի կարգէ Գիսուսեանց , և զի սա ըստ վկայելոյ իւրոյ զսան քսան և հինգ շրջեալ էր յաշխարհին Հայոց և Պարսից , և ունէր փոքր մի տեղեկութիւն հայկական լեզուի թարգմանեաց 'ի լատին ղթուղթ կաթողիկոսին՝ թէպէտ և ոչ հարազատ իմացուածով : Եւ սրբազան Պապն կղեմէս գրեաց 'ի յաջորդ ամի 'ի Մարտի 15 պատասխանի սիրով առ կաթողիկոսն , և ընդ թղթոյն առաքեաց զնամակ դաւանութեան՝ ստորագրել այնմ : Ուրանոր հարեւանցի դիտել արժան է , զի Ղազար Ջահկեցին ասէ 'ի գիրսն իւր , յերես 606 , թէ Աղէքսանդր կաթողիկոս գրեալ իցէ . « թուղթ ընդդիմութեան առ կղեմէս Պապն Հռովմայ » : Եւ սակայն Յակոբ Վիլյոդ՝ որ թարգմանեաց զայն թուղթ յայտնի վկայէ՝ թէ այն էր ուղղափառական և սիրալրական և ոչ դիմադրական . զնոյն վկայէ և տիրացու Մաղաքիա Ժամանակակից , թէ « գրեաց թուղթ սիրոյ առ կղեմէնդ պապն » :

Այս տեղ մեր Աղէքսանդր կաթողիկոսին թուղթն առաջ բերելով , ոչ այնքան պապական պատմիչը բանաքննութեան տակ դնել է մեր միտքը , որքան ցոյց տալ ապացուցով մեր եկեղեցական և աշխարհական իշխանների չափազանց քաղաքականութեամբ գրուած աղերսական թղթերը պապի նման հասարակաց հարց ձեռին ինչ ղէնք են եղել , և թէ Ժամանակով ինչ հետեւանք յառաջ են բերել : Աղէքսանդր կաթողիկոսին համբերութիւնը սպառելով , ճշգրտութների տուած նեղութենէն , Տաճկաց , Ֆռանկաց , Հայոց և Պարսից աշխարհներումն եղող Հայոց , վեր է կացել աղաչելով խնդրում է այդ հասարակաց հօրը , պետական գլխին , անշխմելի ջանի , որ դու թ ունենայ իր դահիճները յետ կանչէ , որոնք աւելի անագորոյն են եղել քան թէ ոչ քրիստոնեայ ժողովուրդները : Բայց այդ թուղթն լինում է պապականաց ձեռին հպատակութեան և դաւանութեան թուղթ , և յետոյ մեր երեսին են տալի թէ , ձեր նախորդ կաթողիկոսներն հպատակել են պապերին : Եթէ մեր կաթողիկոսները քրիստոնեայ տէրութեանց դիմել են բարոյական պաշտպանութիւն խնդրելու մեղ համար , քաջ գիտենանք , որ այդ շարժումն երբէք իրանցմէ չեն արել , այլ այդ քրիստոնեայ կայսերքն են որ իրանց աղղեցութիւնը տարածելու համար Արեւելքում

միշտ Հայոց միջնորդութիւնը ձեռք բերելու հետամուտ են եղել։ Առաջինք են Հռոմիայ պապերը մեր դուռն իրանց ձեռին առնողները, նրանց օրինակին հետեւեցան Աւստրիոյ կայսերքն, որոնք անդադար դեսպաններ կը ղրկէին Վրացոյց և Հայոց, և խօսք կը տային նրանց օգնելու և ոչինչ կարող չեղան առնել, պապերի և կայսերաց օրինակին հետեւեցան նաև Ռուսիոյ ինքնակալք, բայց սրանք աւելի վարպետ դաժնուեցան, մի կողմ թողեցին իրանց եկեղեցականաց միջնորդութիւնը, այլ իրանք յանձն առաւորանալեան բիւրոյնէն եկեղեցոյ ասելով խաբեցին Հայոց : Պետրոս, Կատարինէ և Աղէքսանդրի թղթակցութիւնքը մինչև այսօր մնում են մեր ձեռին, յիշատակարանք մեր աչքին առջեւ են, ինչ պաշտպանութիւն, ինչ օգնականութիւն անելու երդումներ են արել, խոստմունքներ են տուել, թղթեր են ստորագրել, և շատ անգամ մնորի և խաբեբայ բաներով էլ ցոյց են տուել իրանց պաշտպան և օգնական նուաճուած եկեղեցեաց : Հայք միամտութեամբ հաւատալել են նրանց, և նրանց ապաւինել են, ամեն կրօնական խարութիւն վերուցել են իբրեւ ճանարիտ քրիստոնեայ, խաչով և աւետարանով նրանց անձն ու թղթերն ընդունել են : Պապական Չամչեանքը կը պատմէ, որ Պօլտոյ պատրիարք, Հատին արքեպիսկոպոսներին բուրլաւով և մամբրով են եղել ընդունում Պատրիարքարան, նոյնպէս կանէին և Էջմիածին Ռուսաց մեծամեծներն ընդունելու համար : Ինչու համար կանէին այս բաները մեր կաթողիկոսներն ու պատրիարքներն, որպէս զի բարոյական ազատութիւն և ազահովութիւն ունենայ իրանց ժողովուրդն նրանց երկիրներումը : Սխալ դուրսութիւն, որչափ կարծել են այդ բանն իրանց կողմէն շատ հարկաւոր այնքան, այդ կարծուած պաշտպաններն այդ հպատակութիւն և հնազանդութիւն են համարել : Ռուսի թող չի պարսաւեն չպատառուին, այն կիսատ փերատ, կամ բերնէ բերան տեղեկութիւն մուրացող գիտնականք և ամենեւին թուղթ չմտտեն մեզ դէմ զինելու, սր մենք մեր իրաւունքն ենք պահանջում, և այդ իրանց դաշանց վրայ թքնող, իրանց խոստմունքն յետ առնող կառավարութեանց դէմ բողոքում ենք ու խօսում :

Պիտի չարունակուի :

La vraie liberté est celle de l'ame.

Ճշմարիտ ազատութիւնը հոգւոյ ազատութիւնն է :

Ա. Լաֆարէյն. Պար. Ժերօնդէանց. Հարսը Է. էրէս 16 :

Մի տեսակ մարդիկ կան մեր մէջ այսօր , որոնք առանց լուսաւորուելու լուսաւորել կուզեն մեզ , առանց գիտենալու սորվեցնել կը ցանկան մեզ , և առանց իրանց կենացը մէջ մի ամենափոքր ժողովուրդ կառավարած լինելու , կամ թէ՛ մի ազգ կառավարելու գիտութիւնն ո՞րն է գիտենալու , Աղգալէն վարչութեան կառավարելու գիտութիւնը սորվեցնելու վեր կը կենան , և Հայոց ազգին , ոչ պատմութիւնը , ոչ դրպութիւնը , ոչ եկեղեցին , ոչ հին և նոր դրութիւնը կուզեն սորվիլ , քննել ու գիտենալ և նոյն ազգին ընկերական , բարոյական և քաղաքական կեանք դաս տալու կը համարձակին :

Մի տեսակ մարդիկ էլ կան , որոնք թէեւ լուսաւորուած են , քաղաքակիրթ երկիրներ տեսած են , լուսաւոր մարդկանց հետ ապրած են , և գիտութիւն , ուսմունք ունին ինչպէս են , բժիշկները , տէրութեան մի քանի պաշտօնաւորք , մի քանի գրագէտներ և ուսուցիչներ , բայց սրանց ուսմունքն ու գիտութիւնը միակողմանի լինելով , մի առարկայի վրայ է ամփոփուած , և ոչ Հայոց ազգի բարոյական և մտաւոր դաշտը մշակելու համար պատրաստուած : Ուստի այս մարդիկը լոկ եւրոպական լուսաւորութեան տեսական վարդապետներ լինելով , հետեւապէս , իրանք ինչ որ եղել են , այն կը քարոզեն լինելու և Հայոց ազգին . օրինակի համար , թէ որ փառիզական է իրանց լուսաւորութիւնը , փարիզական լինել կը քարոզեն և Հայոց ազգին , թէ որ գերմանական է , գերմանական , նոյնպէս թէ որ անգղիական է կամ ամերիկական , այդ տարերքը կը ցանկան Հայոց մէջ մուծանել : Այս իրողութեան ապացոյց շատ են մեր վերջին ժամանակի պատմութեան մէջ , որն որ հերիք է ընթերցողն իր միտքը բերէ իմանալու :

Մի ուրիշ տեսակ մարդիկ էլ կան , սրանք ոչ կանոնաւոր ուսմունք ունին , ոչ էլ ուսումնական են , կարելի է որ ուսումնասէր էլ չեն , գէտուդէնէն մի քանի մանր մուկ , գո-

ղունի , վերիվերոյ , լսովի , կիսատ տեղեկութիւնք և գաղափար են ստացել , երբեմն ուսուցիչ են եղել , երբեմն խմբագիր , երբեմն պուէտ , և շատ անգամ առուտուր անող , կամ թէ , եթէ բժիշկ են եղած՝ կարծել են և դաստիարակ կարող են լինել , եթէ լեզուագէտ են եղած՝ կարծել են և ուսումնական կարող են լինել , եթէ Հայոց լեզուի ուսուցիչ են եղած՝ կարծել են և խմբագիր և պատմաբան կարող են լինել , եթէ տպագրապետ են եղած՝ կարծել են և լինել 'ի հարկին բանաքննական և գրականական հեղինակ , եթէ վարդապետ Սուրբ գրոց , եղել են և թատերական քերթող , քաղաքական գիտութեանց տեղեակ , բնական գիտութեանց հմուտ , գրականական , բանասիրական և պատմաբանական ուսմանց մէջ էլ փորձուած :

Մի ուրիշ կարգ մարդիկ էլ կան , սրանք ամենէն գերազանցն են , իրանց կեանքումն ոչ կարգացած ունին , ոչ գրած , ոչ էլ կարելի է ասել կարգալ ու գրել գիտեն , թէ բնականէն զուրկ են և թէ ստացականէն , դպրոց , կրթութիւն ասուած բաներն իրանց համար երբէք չեն եղել , շատ անգամ իրանց կարողութիւնը խելքի , կրթութեան և գիտութեան տեղն են բռնել : Այս կարգէն են մեր արքեպիսկոպոսներէն ոմանք , վարդապետներէն մի քանիսը , ազգային պաշտօնաւորներէն մեծ մասը , սրանց պահանջողութիւնը ամենէն մեծն է եղել , միշտ ցանկացել են Հայոց ազգի օրէնսդիրը լինել , նրան՝ իրանց մի խօսքովը , մի հրամանովը և մի նայուածքովը կառավարել են կամեցել առանց դիմադրութեան , առանց նկատողութեան և առանց այլեւայլութեան :

Այս է , այսօր Հայոց ազգի մտաւոր և բարոյական լուսաւորութեան ասպարիզում գտնուած մարդկանց պատկերը , ամեն տեղ , ուր որ հայք կը գտնուին . կը մնայ մեզ հիմա իմանալ որ Պ. Ճ. Արամեանն իր գիտողութեան տեսքը ձեռին ո՞ր տեսակ մարդկանց կարգէն է Հայոց լուսաւորութեան համար աշխատող , բանաքննող և խորհրդատու :

Բայց Պ. Ճ. Արամեանն իր գիտողութեամբը ճանաչելէն յառաջ , մի խօսք ունինք մեր ընթերցողին ասել . մենք այս տեղ Հայոց լուսաւորութեան վարդապետների պատկերն յառաջ բերելով , չենք կամենում երբէք , նրանց աշխատանքը

ուչինչ համարել, նրանց դադարվարներն արհամարհել, նրանց արդիւնքը չճանաչել և մի խօսքով նրանց ասել, լո՛ւռ կա-
ցէք, անշարժ մնացէք, մի՛ խօսէք, մի՛ գործէք, ո՛չ ամենե-
ւին, այլ ինչպէս իրանք իրանցը մեզ են ջանք անում տալ,
ինչպէս իրանք, ասում ենք, իրանց ստացած լուսաւորու-
թեան ծառայելով ըստ այնմ վարդապետում են մեզ, արհա-
մարհելով մերինք, ոչինչ համարելով Հայոց ազգային և բա-
րոյական լուսաւորութիւնը. մենք կասենք այդ մարդկանց,
որ լաւ կանեն որ իրանցը համեմատեն մերինին հետ, հաս-
կանան ու իմանան այն և ապա վեր կենան մեր ազգին հետ
խօսելու. ահա այս կալաչենք այդ մարդկանց որ անեն ՚ի սէր
Հայոց ազգի և նրա Եկեղեցւոյ:

Պ. Ճ. Արամեանն իր գիտողութեանց մէջ առաջին ա-
սածն է թէ, Յանձնաժողովն այս ամենակարեւոր, փառաւոր և սպիտակուն-
դաւորուն էր իբրեւ ամենեւեմ դասնեմէն նեպո ըրած է զորս ամսաւան միջ և կա-
րարեալ համայնաւորութեամբ անդամոցն սորոսաբերելով էր տեղեկացիրը, ներկայա-
ցոցած է զայն 28 ապրիլ 1866 առ ազգային Ընդհանուր Ժողով: Պ. Ճ. Ա-
րամեանն հէնց իր առաջին նկատողութեան մէջ Եւթողիկո-
սական յանձնաժողովոյն տեղեկագիրի վերջնապուն և ազգա-
յին Ընդհանուր Ժողովոյն ներկայանալու ժամանակները կը
շփոթէ: Տեղեկագիրը Ապրիլի 29 ին վերջացաւ, Մայիսի 27ին
ազգային Ընդհանուր Ժողովոյն առաջն ելաւ. թէեւ տեղե-
կագիրը հրատարակուելէն յետոյ ամեն ազգային երեսփո-
խաններին ղրկուեցաւ և Մայիսի 24 ին էլ Պ. Ճ. Արամեանի
գիտողութիւնքն երեւան ելաւ, սակայն և այնպէս Մայիսի
29 ին Ընդհանուր Ժողովը բացի մի երեսփոխանէ ընդհանուր
համաձայնութեամբ ծայրէ ՚ի ծայր ընդունեց տեղեկագիրն,
արձանագրեց, և իր շնորհակալութիւնն յայտնեց Յանձնաժո-
ղովոյ անդամներին: Ուստի Պ. Ճ. Արամեան պարապ տեղ իր
լոռութեան ուսիրը դրժեց և զայրոյն լեւեւ պատրաստուեցաւ և ՚ի
զուր արդմութեան, իսկե՞ծ ու ցաւ դիպց և ունայն տեղը, տեղեկա-
գրին իր վրայ արած ազդեցութեան մեզ հաղորդեց, պարապ-
ւորուելով անտեղի մեկնութեան, կշտամբանէ, զրոյարդմութեան ասի իր
առնել ՚ի սեր իր ծնական մեկնութեան Լոռաւորական հայոց:

Պ. Ճ. Արամեանը Տեղեկագրին իր վրայ որո՞ծ ազդեցութեան
ու սկզբնաւիճի դասաւորութեան իր գիտողութիւն անելու համար տեղ

նոց է դրել իր աչքին, կանգուն և կշեռք է շինել իր ձեռին ու այնպէս վեր է կացել այդ ակնոցով դիտել, և այդ կանգնով և կշեռքով չափել և դատել Հայոց ազգն և եկեղեցին և նրա կաթողիկոսական խնդիրը, ինդհանուր ժողովը և Յանձնաժողովը և այլն. մի դէն թողելով Հայոց ազգի և նրա եկեղեցւոյն սկզբունքը, դրութիւնը, զգայմանքը, հանգամանքը, իրաւունքը, ազատութիւնը, կեանքը, պատմութիւնը, աւանդութիւնը, կարգը, սովորութիւնը, կանոնը եւայլն և այլն. վախենալով որ դրանց մասին խօսելու որ լինի կրօնամոլ կը լինի և աւելի լաւ է համարիլ մի առանձին սկզբունք ունենալ, քան թէ բոլոր Հայոց հետ մի սկզբունք և ինքը իր սկզբունքի իրան սորվեցուցած ազատականութեան դաւանելով, նոյն ազատութիւնը մեզ էլ է քարոզել դաւանելու, մեր ազատականութիւնը, կրօնամոլութիւն համարելով և իւրանը *աղաքականութիւն*, *գիշտականութիւն*, և այդպիսի սկզբունքով ու ազդեցութեամբ պահանջել է Յանձնաժողովէն թէ, ինչու հայաբնակ գերութեանց ընկերակաւ և *աղաքական* միջոցները չէ նկարագրել, ի՞նչ պահանջմունք է այս, ի՞նչ բանի համար, պէտք էր անել այդ, մենք չենք իմանում, եթէ Պ. Ճ. Արամեանն իմանում էր, պէտք էր, որ մի առ մի յառաջ բերէր իր դիտողութեանց մէջ, որպէս զի համոզուէինք, և ոչ թէ իր *սկզբունքին* դաւանութիւնը և իր վրայ եղած *ազդեցութիւնը* որոնցմէ ամենեւին պէտք չունինք, և որոնք ամենեւին պատճառ չեն կարող լինել տեղեկագիրը դիտողութեանց տակ դրնելու: Բայց նա այնքան ներշնչուած է լինում իր կրած ազդեցութենէն, որ կարծում է և ժողովրդին վրայ էլ նոյնն աւրաւ, և ասում է ալի *ազդեցութիւն* չըրա Պաւլեցոյ վրայ Տեղեկաբերը և կամենալով և Ռուսահայոց վրայ էլ նոյն ազդեցութիւնը արած լինի և գոցե առաւել ևս Ռուսական հայոց վրայ, ասում է: Եւ յետոյ իր ժողովրդին վրայ նկատածն իբրեւ ճշմարտութիւն համարել տալու համար, ասում է, *աւելի* էլ իրարու սկանհարցել ինչ է *նշան* ինչ *գործ* *գեղեկաբերը*, *ի՞նչ* ինչ *մարտն*, *պէտք* *աւել* *այս* *խնդիրը* *ի՞նչ* *նշան* *ապրան* *ի՞նչ* *պէտք* *ընեն*. . . եւայլն եւայլն:

Յանձնաժողովոյն տեղեկագիրը կարդացողը, ամենեւին հարցում չէ կարող անել թէ պէտք է *աւել* *այս* *խնդիրը*, վասն զի իր կարդացածն տեղեկագիր է կաթողիկոսական վիճակին,

տեղեկագիր է Պալատէնիայի , տեղեկագիր է Հայաստանեայց Եկեղեցւոյն վարչութեան Ռուսիոյ կառավարութեան տակ , ուրեմն ի՞նչ հարկ կայ հարցնելու թէ տեղեկագիրը պիտի քայլէ թէ ո՛չ , այս մասին մտածել թէ մի տեղեկագիր դորժադրուելու համար կը շինուի կը նշանակէ , հէնց մի խօսքով , տեղեկագրի նշանակութիւնը ի՞նչ բան լինելն ամենեւին չըմբռնել , չհասկանալ :

Պ. Ճ. Արամեանն երեւում է ուրիշ բանէ կրած պիտի լինի իր աղբեցութիւնը և այնպէս վերկացած ու իր դիտողութիւնքն արած , վասն զի հէնց իր առաջին դիտողութեան մէջ ինքն է լինում շփոթողը խնդիրը , Տեղեկագրին իբրեւ խոնդիր կամ Առաջարկութիւն նայելով և հապարակելով անսխալ չէր իմանալէր , հանում և նրա համար ցաւում ենք , որ Տեղեկագրին իր վրայ արած աղբեցութիւնն ներշնչուած և իր սխալութիւնն դաւանելով համաձայն դիտողութիւնքը ծախել է հանել խոհեմութիւն չանելով :

Հարկ է , արդեօք այս տեղ ասել Պ. Ճ. Արամեանին և նրան պէս աղբեցութիւն կրող Պօլեցւոյն թէ , Տեղեկագրին ուրիշ բան չէ , այլ միայն տեղեկագիր , էլի տեղեկագիր , էլի տեղեկագիր , և հարկաւոր չէր դրա համար պատասխանատուութիւն ոչ մի տէրութեան առջև . Թուրքիոյ Հայոց ազգն իրան տեղեկագիր է տալի և պատասխանատուութիւնն իր մէջն է , Պալատէնիայի քննութիւն կայ դրա մէջ , և այդ Պալատէնիան նոր չէ քննուած , Ներսիսի Ժամանակ Հնդկաստանի Հայք քննեցին , մասնաւորապէս ինքն և Ներսէս քննեց , և Հայոց ազգին էլ քննել տուաւ , Մատթէոսն էլ ցանկացաւ իմանալ այդ Պալատէնիայի ինչ բան լինելը , և երբ իմացաւ այն Ժամանակ ճանաչեց Ռուսիոյ կառավարութեան խնամքն ու զգույշ կեցաւ այդ խնամքը խնդրելէն : Այսօր էլ Թուրքիոյ Հայն է վեր կացել այդ Պալատէնիայի վրայ տեղեկութիւն ստանալու . Յանձնաժողով է կարգել և իր փափաքին հասել է . ինչո՞ւ է ներանում սրա համար Պ. Ճ. Արամեանը և ինչո՞ւ ընդհանուր ժողովոյն մերժում է , Ռուսիոյ երկրին մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյն և նրա ծայրագոյն հայրապետին հոգեւոր անկախութեան վիճակը ճանաչելու : Նորանշան աղբեցութեամբ հայեցուածքով դիտողութիւն :

Միանգամ, որ այսպէս մոլորուում ու շփոթուում է Պ. Արամեան իր սկզբունքին դաւանութեան մէջ իր կրած ազդեցութեամբը, գոչում է ընդհանուր ժողովոյն երեսին թէ պէտք էր, համայն Հայոց հպարտութեան վեճակն իբրեւ աւարկայ բռնելով՝ խաղախանութեան օրինաց համայնքն եղանակն առաջարկել յանձնաժողովոյն, որ բռնէ և անոր վրայ հիմնէ իր պետականները:

Ա՛ռ քեզ մի տարօրինակ հրահանգ ընդհանուր ժողովոյն, որն որ քանի անգամ կուղեւ կարդա՛ ու կարդա, մի բան չես կարող հասկանալ: Հպարտութեան վեճակն աւարկայ բռնել խաղախանութեան ընդհանուր օրինաց համայնքն եղանակն առաջարկել յանձնաժողովոյն որ բռնէ. ի՞նչ քննէ, հպատակութեա՞ն վիճակը, եթէ ոչ քաղաքականութեան ընդհանուր օրէնքները, կամ թէ ոչ նրանց եղանակը, և անոր վրայ հիմնէ իր պետականները, եղանակի անշուշտ, վրան զի օրինաց լինէր, պէտք էր, որ անոց ասէր:

Այս հրահանգն մենք չենք կարողանում հաւատալ, որ Պ. Ճ. Արամեանի գրչէն ելած լինի, այդ բոլորովին ուրիշ դրուցումածք է, օտար մարդու բերան է, հէնց կարծես այնպիսի մարդու ասմունք լինի, որ ամենեւին կարողացած չէ եղել Յանձնաժողովոյն տեղեկագրէն յառաջ կամ յետոյ հրատարակուած գրուածքները կոթողիկոսական խնդրի մասին. թէ որ նա լաւ կարողացած և տեղեկացած լինէր այդ գրուածքները, լաւ կիմանար որ հպատակութեան վիճակը քաղաքականութեան օրէնքները խիստ քաջ իմանալով քննուած է նրանց մէջ, և գրուած:

Պ. Ճ. Արամեանն այդ հրահանգն իրան համար պահելով, շատ լաւ կանէր, որ Հայոց հպարտութեան վեճակն աւարկայ բռնէր և խաղախանութեան ընդհանուր օրինաց համայնքն եղանակն մի տեղեկագիր չինէր կոթողիկոսական վիճակին, այն ժամանակ կարելի է, որ աւելի լաւ հասկանայինք իր ասածն կամ ասել ուղղա՞ն, ապա թէ ոչ, ամենեւին հարկ չենք տեսնում մենք մեր մարմնաւոր հպատակութեան վիճակն, մեր հոգեւոր ազատութեան հետ առարկայ բռնել և քաղաքականութեան ընդհանուր օրէնքների համաձայն մեր եկեղեցւոյ հոգեւոր վարչութիւնը նկատել, այդ բաներն այն ժամանակ կը լինէին, եթէ մեր հպատակութեան նկատմամբ և մեր եկեղեցւոյ հոգեւոր վարչութեան մասին մի առաջարկութիւն կամ մի խնդիրք արած

կը լինէր Ընդհանուր ժողովը : Բայց հիմա բանն այն է որ ինքըն առաջ իմանայ թէ Ռուսիոյ մէջ Հայոց եկեղեցին իր վարչութեամբն ինչ վիճակի մէջ է համեմատելով իր եկեղեցւոյն նախնական դրութեան հետ , և յետոյ Գաղափարական լուրերու օրէնքն համաձայն վարուի :

Եւ ի՞նչ կը կարծէ , Պ. Արամեանը , միթէ Հայոց ազգը կը կորցունէ՞ իր եկեղեցւոյ հոգեւոր անկախութիւնը թէ որ Ընդհանուր քաղաքականութեան օրէնքին համաձայն վարուի : Ահա մի խնդիր , որու համար կը հրաւիրենք Պ. Արամեանն որ մեզ հետ այս մասին ելի . կը կամենայ վիճել , ասպարէզ դուրս գայ , մենք ցոյց տանք նրան , որ հոգեւոր աշխարհն նիւթաւոր աշխարհին ձեռքին չէ եղել երբէք ու այսօր էլ չէ , ինչպէս ինքը կարծում է , ու երբէք էլ պիտի չլինի :

Պ. Ճ. Արամեանը , ինչպէս ասացինք , Տեղեկագրի վրայ կարծես օտարի ակնոցով է նկատել և նրա համար , ասում է թէ , Յանձնաժողովն իր մասնաւոր տեսութիւնքն իրան յանձնուած խնդիրների հետ է խառնել . է՛հ , որո՞նք են Պ. Արամեան Յանձնաժողովոյն մասնաւոր տեսութիւնքը եւ իրան յանձնուած խնդիրները , ինչո՞ւ չես ցոյց տալ մեզ , որպէս զի և մենք տեսներք ու որոշենք : Ի՞նչ են նշանակում հայափառներն « իշխող » , և հայաբնակ երկրներու « եղանակ » օրէնքն և այն երկրներէ մէջ բնակող հայոց վիճակն ակնառնութեամբ մի պարզի՛ր մեզ համար . այդ ասմունքն որ մենք էլ իմանանք : Ի՞նչ ես ուզում ասել , որովհետեւ մենք հպատակ ենք , պէտք է որ մեր եկեղեցին , այսինքն մեր խիղճն ու հոգին էլ հպատակեցնենք : Հայաբնակ երկիրների օրէնքները վեր առնենք և նրանցմով մեր հոգեկան օրէնքը կատարենք և թողենք , որ մեր եկեղեցւոյ կարգերն ու կանոնները , խորհուրդներն ու օրէնքները լուծուին ու հաշտուին , ու նոյն երկիրներին բնակող Հայոց վիճակի , ի՞նչ վիճակի , լա՛ւ , վա՛տ , բռնաբարութեամբ , պերճացած վիճակի ակնածութիւն անենք . ու եկեղեցւոյ հոգեւոր անկախութիւնը զոհենք , ի՞նչ էք ուզում ասել , մենք կարծենք որ ուզում էք ասել , մարմնով և հոգւով և մտքով ու ժեւորին առջեւ ծուկն չոքենք , դու ես մեր Աստուածն ասենք , որովհետեւ քո ձեռքին « ուր » , հո՛ւր և ի՛նչ ունիս , այսպէս չէ՞ , ա՛ս : Պ. Արամեան , չենք հաւատում , որ դու լինիս այս խօս-

քերն ասողը , այլ ուրիշներն են , որ քո բերնովդ են խօսում :

Յետոյ Պ. Ճ. Արամեանը , չենք իմանում ի՞նչ աչքով նըշմարում է հեռուանց , որ անհամար չփոթութիւն պիտի պատճառէ ընդհանուր ժողովոյն այդ անբնական ընթացքը , լուկաորչական ընդհանրութեան մէջ , բայց անհոգ լինի այս մասին , բացի իրմէն ոչ ոք չփոթուեցաւ և այդ շփոթումն ու խառնումն առջեւն առնել ամենեւին հարկ չեղաւ ընդհանուր ժողովոյն : Ընդհակառակն , ընդհանուր ժողովն և նրա հետ Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակները ՚ի թուրքիա իմացան , տեղեկացան այդ տեղեկագրով Ռուսիայում մեր հոգեւոր կեանքին ի՞նչ վիճակում լինելը , ուստի և Պ. Ճ. Արամեանի ասելն թէ Յաննաշոողոմ Կոստի իրան պաշտօնին յանձնառած յարկութեանցմէ և թէ հասարակութեան պիտիւնը լի է ասին մէկ նստին մէկ բնած զբոլոյն մտնելով սորաբնած է իր արեւելակները , մենք իրան համար կասենք թէ՛ անպատճառ Պ. Ճ. Արամեանը , քնած ժամանակն է կարդացել Տեղեկագիրը և միտելով է վերջացուցել իր կարգալը ու նրա համար Տեղեկագիրն , ուրիշ գրուածքի տեղ է արել , ու այնպէս վեր կացել նրա՝ իր վրայ արած ազդեցութիւնը մեզ հաղորդել :

Այդ Տեղեկագիրը , ոչ մի ազգի համար , ոչ մի տէրութեան առաջն ելնելու համար գրուած չէ Պ. Արամեան , այլ միայն Հայոց ազգի համար , և թուրքիոյ Հայոց ազգն իրան համար տեղեկագիր պատրաստելու ժամանակ , ամենեւին պարտական չէ Կոստի Կոստի տառաքանեայ պատուիրանքներն իր մտքումն ունենալ , վասն զի թուրքիոյ Հայոց ժողովուրդը տէրութիւն չէ և տէրութեանց հետ գործ չունի . միայն իր վրայ մարմնաւորապէս իշխող տէրութիւնը կը ճանաչէ և նրա հետ միայն պարտական է տէրութեանական լեզու բանեցնել , և ոչ իր ժողովուրդին հետ Կոստի Կոստի նախաձեռն վարուիլ մի այնպիսի խնդրի համար , որն որ նոյն ազգին և նոյն ժողովուրդին խղճին և հոգւոյն կը վերաբերի : Ինչպէս ասացինք , երեւում է որ Պ. Ճ. Արամեանի ականջին այդ դիտողութիւնքն հալեցնողների փորձերը խիստ շատ ցաւել են , որ Ռուսիոյ կառավարութիւնն այնպիսի կենդանի և ճշմարիտ գոյներով նկարագրուած է թուրքիոյ Հայոց առջեւ : Եւ , թող գնան այդ մարդիկն , ազատ երկիրներումն հրա-

տարակուսած բուն Ռուսերէն գրքերին և օրագրերին մէջ տեսնեն թէ ի՞նչ ներկերով է նկարուած Ռուսական կառավարութեան քաղաքականութիւնը, և նրանց վրայ իրանց դիտողութիւնն անեն : Ի՞նչ են ուզում մեզմէ . ո՞վ է վեր կացել մինչեւ այսօր Ռուսաց արգիլելու որ, Օսմանեան տէրութիւնը և ամբողջ Թուրքիան իրանց օրագրերումն չխժբծեն, չծաղրեն, չհեղեն, իրանց եկեղեցիներումը մեր կառավարութիւնն իբրեւ քրիստոնէից հալածող չքարոզեն, թատրոններումն, թողած իրանց ծիծաղելի բարքն ու վարքը, Օսմանցիքն իրանց կատակերգութեան նիւթ չշինեն . Հայոց բարբառոս չանուանեն և նրանց եկեղեցին աստուածանոց, մեհեան, Հայոց երիտասարդներն ապստամբ անունով չհռչակեն և քաղաքացւոց էլ արմատ (հայու կտոր չնշին կամ շուն հայ) չկոչեն : Ինչո՞ւ համար Պ. Արամեան, Ռուսներն այդ արտօնութիւն վայելեն մեզ համար . նրա համար, որ նրանք «*խոր* են, «*հոր* ունին, «*սոր* ունին և իւր. Զարմանալի քաղաքականութիւն և տիւրմանութիւն քականութիւն :

Պ. Ճ. Արամեանն հաւատալով քրիստոնէական կրօնի ճշմարտութեան այնքան կը յարգէ եղել այն, որչափ որ մի մարդ իր կրօնը կը յարգէ . բայց միեւնոյն ժամանակ վրայ է բերում իր խոստովանութիւնն ասելով թէ, կրօնաբնական աստուծոյ և ստանալի ստանալ մի ինքս որպէս «*կառաւոր* է և ինչ որ արտօնութիւնը հարեանցի է ըստ կրօնականին : Այսպիսի մի անկեղծ խոստովանութիւնէ յետոյ քաղաքականութիւնն է ձեռք առնում, իբրեւ խորն իմանացող և այնպէս կարող զգում իրան դատում առնել կրօնական կամ եկեղեցական բանի վրայ : Բայց մի վարպետութիւն է բանեցնում, ասում է, ինչ որ մեղանշնա ներդրումն է ինքեւն . նորաձեւ հռետորութիւն, ինքն իր դիտողութիւնքը չկնքած դեռ իր մի քան քան ասում է, ինչպէս ինք համարձակում է եղբակացնել թէ ցանձնաժողովն է ասել այդ :

Արդ, ի՞նչ խօսինք Պ. Արամեանի հետ, երբ ինքն իր խոստովանանքն ու մեղան իր մեղքերէն առաջ մեր առաջն է դնում և հաստատում է իրան, Հայոց եկեղեցւոյ և նրա կաթողիկոսի անկախութիւնն ու գերագոյն իշխանութեան հոգեւոր անկախութիւնը հասկացող չլինելը, ու էլ իրաւասութեան և հայրապետական անկախութեան բառերն ձեռին է առնում :

և իր քաղաքական և անտիտիփոմաթիքական փորձաքարին քսելով դատում է Յանձնաժողովին արածները . ուստի հարկաւոր է այստեղ նորէն հրաւիրել Պ. Ճ. Արամեանին որ Յանձնաժողովոյն տեղեկագիրը կարգայ ու լաւ իմանայ , որ հայրապետական անկախութիւն ասելով , ամենեւին Պապի քաղաքական անկախութիւնը պէտք չէ իմանալ իրան պէս , այլ նրա հոգեւոր անկախութեան նշանակութիւնը , որ իր դոյութեանէն մինչեւ այսօր ունեցել է , տասնուհինգ դար շարունակ ամեն հոգ , սուր , քոյր ունեցող ունեւորին ճանաչել տուել է , նոյն իսկ այդ , ըստ Արամեանի հրով , սրով , թրով և ուժով խօսող Ռուսաց կառավարութիւնն էլ ճանաչել է Հայոց կաթողիկոսի Հայաստանեայց եկեղեցւոյ և Հայոց ազգի հոգեւոր տէրն ու իշխանը լինելը . Ռուսի ծիծաղելի է երեւում մեզ , որ Տեղեկագիրն այնպէս ազդեցութիւն է արել իր վրայ և զարմանք էլ է պատճառում , որ քաղաքական անկախութիւնը բարոյական անկախութեան հետ շփոթել է :

Թէ Պ. Ճ. Արամեանը մեր կաթողիկոսական անկախութիւնը չհասկանալով ի՞նչ ծուռումուռ դիտողութեանց մէջն է ընկել այս տեղ յառաջ բերելու լինէինք , վերջը չէր գալ : Կարգաւ իրեն իրեն կասէ , յետոյ կաւեցնէ թէ ամբողջ Կաթողիկոսական ազգ է : Կաթողիկոսական անկախութիւնը Հայը չընդունիր , կասէ , ոչ մի ժամանակ այնպիսի անկախ հայրապետութիւն տեսնուած չէ , կասէ , Հայաստանի մէջ , ու յետոյ մէկ ասմունքը կը թողու միւս ասմունքը ձեռին կառնէ , իրար հետ կը խառնէ կը շփոթէ իր ասածները . մի տեղ , իր մի քիչ յառաջ ասածը կը հերքէ , միւս տեղ կը հաստատէ , իր փորձուքն ու բողոքը ժողովրդին վրայ կը ձգէ , այն ժողովրդին , որ մի տեղ տիրացու է կասէ , միւս տեղ ի՞նչ ուզելը չգիտեր կասէ , յետոյ ամենայն Հայոց կաթողիկոսութեան նշանակութիւնը Սոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց հետ խառնելով , Յանձնաժողովոյն անդամներին մէկ արտաքուստ լուսաւորչական են կասէ , մէկ ի՞նչ քրուստ ֆաթիլիք են կասէ , մէկ էլ վրանաբնակ են որմնարգել աշխարհացի են կասէ , կասէ ու կասէ , մինչեւ կը կարծէ թէ մի մեծ յանցանք կը գտնէ տեղեկագիրին մէջ յայտնուած , և այդ ձեռին կառնէ ու Հայոց ճակտին կը զարնէ , և կուղէ իր քաղաքա-

գիտութեամբն ու տիփլօմաթիքականութեամբը պարսաւել, նախատել մեր նախնիքը, Հայոց ազգի Պատմութիւնը, Հայոց ազգն ու Հայաստանեայց եկեղեցին: Մեր նախնիք զինաց պահպանութեան համար Բնա- ակառօթիւն, Բնա- Ժաղատական նկարագրաւ նկատու և ունեցողները նոյննեպայն մերժեցին: Տեղեկագրի այս խօսքերն իրեն այնքան ազդեցութիւն են արել, որ բորբոքուել է Պ. Արամեանն ու ահա կասէ պօռալով, թէ պարսկան անորանալի ճշմարտութեան, այս հոգին որն որ մի փոքր յառաջ կ'աթողիկոսական և եկեղեցւոյ անկախութեան մասին Հայաստանեւոյմէ մերժած էր, այս տեղ ինքը կը հաստատէ, այս է Հայոց հոգի կրած հոգին, այս ասելով կը բերէ այն հոգին և լնդհանուր ժողովոյն կը տայ, որու համար շատ շնորհակալ ենք իրմէ և յիրաւի այնպէս է. Հայք, հոգեւոր ազատութիւնը մարմնաւոր ազատութեան շատ բարձր ու վսեմ են համարել և մարմնաւորը նրա համար զոհել են, թէ իրանց բուն հայրենի երկրումն եղած ժամանակ, և թէ օտար երկիրներում գաղթած ժամանակ, եւ թէ հպատակութեան ժամանակն էլ. հէնց այս օր էլ իրանց՝ միեւնոյն հոգին, միեւնոյն զգացմունքը կրելն ցոյց տուին թէ իրան՝ Պ. Արամեանին և թէ բոլոր աշխարհիս, ինչպէս ինքն ասում է. Բայց նա, այդ հոգին նրա թշուառութեանց պատճառ է գտնում, և որու համար, պախարակելով պախարակում է լնդհանուր ժողովոյն, որ մենք՝ դրա հակառակ դուրելով կը դուլենք Պօլսոյ ազգայնոց և իրանց լնդհանուր ժողովոյն, որ մինչև այսօր իրանց նախնեաց հոգին իրանց սրտումն վառուած պահած ունին եղել և ժամանակին ցոյց տալն էլ գիտեն եղել բոլոր սուր, հուր, թուր կրող ուժերը դատաւորներին, և թէ որ Պ. ճ. Արամեանը այս հոգին բոլոր Հայոց վրայ մինչեւ այսօր տիրելը կուզէ հասկանալ, մենք պատրաստ ենք իրան ցոյց տալ այդ, ոչ միայն բուն Հայոց մէջ, այլ նաեւ մեր Պապական և Բողոքական եղբարցը մէջ, կարելի է նաեւ բուն իսկ Պ. ճ. Արամեանի մէջն անգամ:

Թէ որ Պ. ճ. Արամեանն ուշադրութեամբ կարդացած լինէր Տեղեկագիրը և միտ դրած լինէր նրա արած սպառնալիցութեան Պօլսոյ լնդհանուր ժողովոյն թէ եկեղեցական և թէ աշխարհական երեսփոխանաց վրայ, այն ժամանակ կը ճանաչէր Հայոց բուն հոգին: Այո՛ Պ. ճ. Արամեան, մեր նախնեաց

օրինապահութեան հոգին, մինչև այսօր մեզ ժառանգ է մընացել և այդ հոգւով ահա՛ առաջը կենենք այսօր քաղաքակիրթ և լուսաւոր աշխարհին և պատրաստ ենք մեր հոգւոյ ազատութիւնը բռնաբարող «խեղճ» հրին, սրին և թրին մեր նախնեաց նման մեր մարմնաւոր կեանքը զոհել և ինչ որ գուք ցանկանում էք որ ունենանք՝ մեր եկեղեցւոյ և նրա հետ մեր կաթողիկոսի ստրկութեամբը : Մեր հոգեկան ազատութեան աղբիւրն Հայաստանեայց եկեղեցին է իր կաթողիկոսի հոգեւոր անկախութեամբն, մենք հաղար «խեղճ» կասենք մեր Պօլսոյ ազգայնոց, որ այս խնդիրը լաւ հասկացան, շատ և շատ մխիթարուեցանք տեսնելով որ Պօլսոյ ազգայինք, եկեղեցական թէ՛ աշխարհական այսքան տարի հպատակութեան դրոշմն իրանց ճակտին վրայ կրելէն յետոյ դեռ կրում են եղել իրանց սրտին մէջ մեր նախնեաց սուրբ և ազատ հոգին և 'ի հարկին կարող են եղել ցոյց տալ այն բոլոր աշխարհին :

Պ. Ճ. Արամեանն իր գիտողութիւնքը լաւ հաստատելու համար հարկաւ իր սկզբունքին դաւանութեան համաձայն այս աստուծոյն է յառաջ բերում : Աշխարհիս մէջ ասումէ, իրաւունքն «խեղճ» է և այդ ուժւորին զօրութիւն էլ դոյացնում է հրով, սրով, և թրով, այսպէս է եղել աշխարհս, ասում է, այսպէս էլ պիտի լինի : Մենք էլ կասենք Պ. Ճ. Արամեանին մեր սկզբունքի դաւանութիւնը, թէ այո՛ իրաւունքը մի զօրութիւն է, բայց այդ զօրութիւնը դոյացած է աշխարհիս վրայ հոգեկան, բարոյական և մտաւոր զօրութեանց տարերքով, այսինքն իրաւանց արդարութեան, օրինաց ճշմարտութեան, դործոց օրինաւորութեան և հոգւոյ ազատութեան, որոնք միացած, եկել, քանդել և փչացուցել են սրի, թրի, հրի զօրութիւնը. այսպէս է եղած անցած աշխարհն, այսպէս էլ պիտի լինի ապագայ աշխարհն. երկու զօրութիւնք միշտ կուռել են աշխարհիս երեսին իրար հետ, նիւթական և հոգեկան. թէ սրանցմէ, ո՞րն որու է յաղթել : Պ. Արամեանը լաւ պէտք է գիտնայ որովհետեւ իբրեւ քաղաքականութեան վարդապետ է ցոյց տալի իրան մեզ իր գիտողութեանց տեսարակովն. և ուզէ համոզուի, ուզէ չհամոզուի, այս է աշխարհիս պատմութեանն ընթացքը, որ հնոյն պէս նիւթական չէ, այլ բարոյական և մտաւոր և հոգւոյ ազատու-

թիւն կը պահանջէ այսօր : Պ. Արամեանը կարծում է որ հպա-
 տակութեան վիճակը , Հայուն համար անծանօթ և անզգալի
 է , մոլորուած է այս մասին նա , մենք տեսնում ենք որ Հայն
 այն աստիճան ներդործուած է այդ վիճակով , որոյ ներդոր-
 ծութիւնը կարծում էինք մինչեւ իր հոգւոյն և մտքին վրայ
 անգամ բնաւորուած լինի և վախենում էինք որ չլինի թէ մի
 օր և հոգւով հպատակեցնէ իրան իր մարմնաւոր տէրերին ,
 բայց Պօլսոյ Հայն այսօր ցոյց տուաւ մեզ էլ , Պ. Ճ. Արամեանին
 էլ որ մեր տեսութիւնքը ծուռ են եղել : Ուստի այս այսպէս
 լինելով Պօլսոյ Հայն իր եկեղեցւոյ վիճակն ամենեւին իր հպա-
 տակութեան վիճակին հետ չէր կարող բաղդատել և հաւա-
 սարել նրան , որովհետեւ ինքը մարմնաւորապէս հպատակ է ,
 չէր կարող և մտաւորապէս ու հոգեկանապէս էլ հպատակ և
 ստրուկ լինել . քաղաքական նկատումն , միայն իր քաղաքա-
 կան կեանքի մասին կարող էր ունենալ և այդ նկատումն կա-
 րող է և Ռուսաց կառավարութիւն պահանջել իր օրէնքին
 համաձայն , սրամէն դուրս ելծէ պահանջէ , այսինքն մեր հո-
 գեւոր կեանքին վրայ էլ իբրեւ ոստիկան կանգնելու լինի ,
 այն ժամանակ մենք էլ , վտանգումն է մեր հոգեւոր կեանքն
 ասելով , բարձրաձայն կը դռչենք , ինչպէս այսօր դռչում ենք
 մինչեւ որ Աստուած մեր ձայնը լսէ : Բայց նա , մեր բերանը ,
 կը խցէ պիտի ասէք իր «*բո՛ւն*» խոյն , մենք էլ այն ժամանակ
 կասենք իրան , ինչ որ մեր նախնիքն և մեր նախորդքը ասել
 են նրանց , որ սրի և թրի զօրութեամբ են բռնացել մեր հոգ-
 ւոյ վրայ , կամ դժոխքի հրին են դատապարտել մեզ , «*թէ*
օրհնեալ եղիցին կամքքո՛ւ» : Պ. Արամեան *«⁺ազատական նկատում*»

կը քարոզէ մի ժողովրդի , որ ոչ քաղաքական կերպարանք ու-
 նի և ոչ քաղաքականութիւն և ոչ էլ կարելի է ասել այս կամ
 այն տէրութեան մէջ բնիկ քաղաքացի է , Պ. Արամեան փո-
 խանակ ասելու թէ Հայն պէտք է իր հոգւոյն տեղ իր ապ-
 րուստը մտածէ , ասում է , պէտք է քաղաքական նկատումն
 ունենայ : Բայց որովհետեւ այդ որ ասէր ըստ իրան *«⁺էլ*» կամ
 կը լինէր կամ չէր լինել , նրա համար մի փոխառովի խօսքէ
 վեր առել խեղճ Հայու երեսին տարու համար , կարծես Ռուսաց
 կառավարութեան կողմանէ , մենք էլ կասենք Պ. Արամեա-
 նին և նրան ասելով Ռուսաց կառավարութեան էլ . թէ ո՛ր կա-

առավարութեան մէջ, որ հոգւոյ և խղճի ազատութիւնը յայտնի կամ թաղուն բռնաբարուած է, որ կառավարութեան մէջ, որ Հայոց ժողովուրդն իր Եկեղեցւոյ ազատութիւնը կը տեսնէ ճնշուած այն կառավարութիւնը բռնաւոր կը ճանաչէ, Ռուսաց կառավարութիւնը խիստ լաւ դիտէ, որ Հայք եթէ իր երկրումն են գաղթել, իր տէրութեան ներքեւ են մտել իրանց Եկեղեցւոյն ազատութիւնը վայելելու համար է և ոչ ուրիշ բանի, դաշնագրութիւնք և յիշատակարանք մէջ տեղ են, բայց Պ. Արամեանը պիտի ասէ որ կառավարութիւնք իրանց արած դաշնաց վրայ կը թքնեն, իրանց տուած արտոնութիւնքն յետ կառնեն և իրանց տուած խոստումնք չեն կատարել, նրա համար, որ նրանք «~~...~~» են և մենք տկար, անզօր, մենք էլ կասենք, որ տկարն էլ իրաւունք ունի այդ պիտի ուժերին օրէնքն ապօրինաւոր է, քրիստոնէական չէ, բռնաբարող է և այլն եւ այլն ասել: Պ. Արամեան լաւ կանէր Ռուս կառավարութեան քարոզէր քաղաքականութիւն և քաղաքավարութիւն Հայոց նկատմամբ և ոչ Հայուն իր իրաւունքները զոհել ~~ազատական նկատմամբ~~ համար: Պ. Արամեանին և նրա հետ անշուշտ Ռուսաց կառավարութեան փորը խիստ է ցաւել, որ տեղեկագրի Յանձնաժողովը Ռուսաց երկրում բնակող ~~ներսէ~~ ճանաչուած անձանցմէ տեղեկութիւն է առած: Այո՛ Պ. Արամեան, Հայոց ժողովուրդն որ 'ի Թուրքիա Հայաստանեայց եկեղեցւոյ վարչութեան և նրա կաթողիկոսութեան վրայ տեղեկութիւն խնդրեց և պարտական էր շատունցմէ խնդրել, և այս տեղեկութիւնը յայտնի բան է, որ Ռուսամունների պիտի չդիմէր առնելու, որոնք իրանց Եկեղեցւոյն և ազգին օգուտն ոչ ինչ կը համարին Ռուսիոյ կառավարութեան օրէնքների մօտ: Պ. Արամեան, եթէ մեզ էք ակնարկում այդ խօսքով, մեր տուած տեղեկութիւնքը մէջ տեղ են, քո մասնւէն են դուրս եկած, ցոյց տուէք խնդրենք եթէ նրանց մէջ կրօնամոլական հոգի կայ: Բայց այն էլ իրաւ է որ նրանց մէջ ազատամոլական սկզբունք և դաւանութիւն չկան: Թէ որ խորեն վարդապետին գրած նամակին մասին էք ասում, էլի ձեր դիտողութիւնն արդար չէ, նրա գրածը բոլորովին Ռուսապաշտպան է, թէ Անդրէաս եպիսկոպոսի համար էք ասում կրօնամոլ, նա և ոչ Տեղեկագրին ստորագրել է, Ռուսաց կա-

ուսման ժամանակն վախճանալով թէ չլինի իրան տէրութեան
երկիրներումը դրա համար չընդունի : (Կասեն թէ յառա-
ջուց էլ սպառնացել է եղել Անդրէասին չստորագրել տե-
ղեկագրին) բայց սրամէն , այդ տեղեկութիւն տուող անձանց
մէջ էլ ներհունութիւն չէք ուղեւ տեսնել , նրա համար , որ
ձեզ պէս փոքր , փոքրիկ , փոքրիկ , Աւստրիոյ և Ֆրանսիոյ պատմու-
թիւնը չդիտեն և քաղաքական դասեր չեն առել : Պ. Ա-
րամեան հերիք չէ , Պօլսոյ հայքը քաղաքական և կրօնական
նկատում չունեցող մարդիկ էք անում , այլ բոլորովին 'ի զուր
ճարտաձար էլ չեն , ասում էք , այլ ճարտաձարին հակառակ , այսինքն
իշխում : Եւ նորէն Պ. Արամեան այդ իշխման ազդին կարգ ,
մարտ և կանոն ստիճանում էք ձեր տիպիւմաթիքականութեամբն
ու քաղաքագիտութեամբ : Բայց դեռ Պ. Արամեանն այդ-
խօսքերն իր դրչին չառած , Ռուսամիջ հայոցմէ լսած էինք
և գիտէինք , որ այդ խօսքերն Ռուսերն են դնում նրանց բե-
րանը մեզ հետ կուսելու համար , և մեր թրոփն մեր գլու-
խը կտրելու համար : Ռուսի թող այդ տիպիւմաթիքական
կերպերը Ռուսաց կառավարութիւնը գործածէ , երկու հայ
իրարու հետ խօսեցնելով , բան հասկանալու : Մենք կարծել
էինք նաև , որ Պ. Արամեանն ու իր նմանները Տեղեկագիրը
կարդալով վերջապէս իմացել են թէ Հայոց ազգն ի՞նչ ուղեւ
և ի՞նչ է ուղածն ու ի՞նչ կղզայ այսօր վասն զի չէինք կարծել
որ այն աստիճանի մի քաղաքագէտ և տիպիւմաթ մարդ ինչ-
պէս ցոյց կը տայ իրան Պ. Արամեանն իր ազգային իմանում չը
լինի և ի՞նչ բան զգալու պարտաւոր լինեն զգացած չլինելով ,
կարծէ որ իրան պէս և բոլոր Հայք իրանց ուղած չեն գիտել :
Պ. Արամեանը չիթիւթել է իր առարկայն , սկզբունքը և
դաւանութիւնը , Հայոց ազգի սկզբունքին դաւանութեան և
ուղած հոգեկան անկախութեան հետ , ու այնպէս վեր է
կացել ինչպէս շատերն են անում , իր սկզբունքի դաւա-
նութեան և իր կրած ազդեցութեան համաձայն դատել և
դատապարտել Հայոց ազգն , երեւում է որ իր կրած ազդե-
ցութիւն Տեղեկագրէն իր վրայ մի տեսակ տեսդ է բերել , ու
չէ իմացել թէ ազգն ի՞նչ կուղէ և վեր է կացել նրա լուսաւո-
րութեան աշխատելու : Ափսոս ցաւում ենք որ այսքան տարի
փարիզ և Պօլիս կեանք էք մնալ , արծաթ վառնել և խելք

Թափել ու չէք կարող եղել հասկանալ հայոց ազգի ուղածն ինչ է և այնպէս պարտաւերով էք պարտաւում տեղեկագրի Յանձնա-
 Ժողովոյն իբրև անտեղեկ ազգի վիճակին և փաստաբան կանգ-
 նած և ակամայ նրա միութեան կապերը քանդող : Դուք էք
 Պ. Արամեան վեր կացել այդ քանդումը անելու ջանալ ձեր
 դիտողութեանց տեսրակը ձեռին : Դուք էք Պ. Արամեան որ
 առանց Տեղեկագիրը հասկանալու և առանց գիտենալու թէ
 ազգն ի՞նչ կուզէ , առանց խորն իմանալու թէ մեր ազգի թըշ-
 ուառութեան և խեղճութեան պատճառներն որո՞նք են վեր
 էք կացել մեր բարոյական ազգայնութիւնը քանդել ուղղը և
 Եկեղեցւոյն անկախութիւնը ջնջել կամեցող տէրութեան քա-
 ղաքականութիւնը պաշտպանել , նրա սուղիններն ու թնդա-
 նութները ցոյց տալով մեզ :

Ամբողջ Հայոց ազգի ուղածն իր ընդհանուր և մասնաւոր
 Ժողովներովն իր հոգեկան անկախութիւնն է , Պ. Արամեան ,
 ո՛ւր որ է , ամեն տեղ , Հնդկաստան , Ռուսաստան և Թուր-
 քաստան : Այս քաջ իմացէք Պ. Արամեան , և ձեզ հետ միա-
 սին ձեզ նմաններն ու Ռուսաց կառավարութիւնն էլ թող ի-
 մանայ , թէ Հայոց ազգն իր բարոյական անկախութիւնն ա-
 զատելով ոչ քրիստոնեայ ազգաց բռնաբարութենէն մինչև մեզ
 հասուցած Ժառանգ է թողած մեզ : Բայց այսօր Պապականու-
 թիւնը մի կողմէն , Ռուսականութիւն միւս կողմէն բռնաբարում
 են այդ և քանդելու են աշխատում : Արդ Հայոց ազգն այսօր
 ազգային բարոյական անկախութիւնն ապահով անելու հա-
 մար է աշխատում իր վերջին ճգով թէ Սահմանադրութիւն
 հաստատելով և թէ իր կաթողիկոսական իշխանութիւնը ամ-
 րացնելով և իր այս ազգային բարոյական անկախութիւնը նա
 մի միայն իր Հայաստանեայց սուրբ և առաքելական եկեղեց-
 ւոյն մէջն է տեսնում , և ոչ նրամէ դուրս : Հասկացած է այսօր
 գիտութեան լուսով թէ « ՃՇՄԱՐԻՏ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՀՈԳԻՈՅ ԱԶԱ-
 ՏՈՒԹԻՒՆՆ Է ՈՐՈՇՆ ՄՈՒՈՂՆ Է ՄԻ ՄԻԱՅՆ Աստուած :

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԹՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ